



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (170)

#2 փետրվար 2020

Կոմիտասի անվան ազգային քառյակը 95 տարեկան է...
հետադարձ հայացք դեպի 2019 թվականի հայ մշակույթի նշանողը



Դեկտեմբերի 13-ին
Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի
Վեհարանի հանդիսությունների
դահլիճում տեղի է ունեցել
Կոմիտասի անվան ազգային
քառյակի համերգը՝
նվիրված
քառյակի հիմնադրման
95-ամյակին

2019-ը նշանավորվեց իբրև ազգային մշակույթի նշանողների տարի: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտարարությամբ Կոմիտասի և Զ. Թումանյանի 150-ամյա հոբելյանները դարձան հայ հանրության խորհրդանիշը համաշխարհային քառերախորհրդակցական արտացոլելով մեր մեծ արվեստագետների լեգուն ու իմաստությունը:

6



ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ Յուրի Հայկի Դավթյանի հիշատակին

Հայ երաժշտական կատարողական արվեստը մեծ կորուստ կրեց: Երկրային կյանքից հեռացավ մեծանուն դիրիժոր, հիանալի մանկավարժ, հայրենասեր քաղաքացի Յուրի Հայկի Դավթյանը: Որպես օպերային, սիմֆոնիկ դիրիժոր նա երաժշտագետ սովորեց Մեծն Կոմիտասի անունը կրող կոնսերվատորիայում, անգլուգական երաժիշտ-մանկավարժներ Կոնստանտին Սարաջևի և Գեորգի Տիգրանյանի մասնագիտական դասարաններում:

3

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԳԵՑ ԹԵՀՐԱՆՈՒՄ «Տավիղ» երգչախմբի համերգը՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին



«Տավիղ» երգչախումբ, խմբավար Արփի Սիմրոջյան (Նազարյան)
նվագակցող՝ Ալին Թաշճյան

Թեհրանում Հայ համալսարանականների ընդհանուր միության (նախագահ՝ Շապին Աբրահամյան) «Նիկոլ Աղբալյան» հայտնի սրահում կազմակերպվել էր միության «Տավիղ» երգչախմբի տարեկան համերգը՝ նվիրված Կոմիտասի և Զ. Թումանյանի ծննդյան 150-ամյակներին: Խմբավարն է Արփի Սիմրոջյանը (Նազարյան), նվագակցողը՝ Ալին Թաշճյան: Միջոցառման բացման խոսքում երգչախմբի անդամներից Փյունիկ Խուդավերդյանը նշեց. «1988 թվականին Հ.Զ.Ը. միության ժամանակի վարչությունը, զգալով երգչախմբի պահանջը, հրավիրեց Արփի Սիմրոջյանին, որի ջանքերով հիմնվեց քառաձայն «Տավիղ» երգչախումբը, շուրջ 40 անդամ-անդամուհիներով»:

7

ՍՈՖՅԱ ՄԻՖԱՅԵԼՅԱՆԻ գործունեության շուրջ



Ամսաթերթում անդրադառնալով 2019 թվականի տարեկնոցյան ամփոփումներին, ներկայացնում ենք կոմպոզիտոր, դաշնակահար, ԵՊԿ մասնագիտական դաշնամուրի ամբիոնի նախկին դասախոս՝ Սոֆյա Միֆայելյանի գործունեությունը:

Նրա մասին հրատարակվել է «Видные армянские музыканты Санкт-Петербурга», կենսագրական տեղեկատուում, կազմող՝ Ա. Մերուժանյան, 120 էջ., պատկերազարդումներով, «Роза ветров» հրատ., Սանկտ-Պետերբուրգ:

6

ԹՈՒՐԹԻՎՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ԿՈՄԻՏԱՍԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

2019 թ. նոյեմբերի 30-ին «Ստամբուլի Կեդրոնական Սանուց միութեան» սրահում տեղի ունեցավ Ստամբուլի հայ, թրքազետ, Կոմիտասի ձեռագրերի վերծանմամբ զբաղվող երգիչ Տիրան Լոքմազյանի «Գերմանական երկեր» ժողովածուի թուրքերեն թարգմանված տարբերակի շնորհանդես-համերգը (հայերենով տպագրվել է Հայաստանում, իսկ գերմաներենով՝ Գերմանիայում): Տ. Լոքմազյանը հայերենով և թուրքերենով բանախոսել է և ներկայացրել Կոմիտասին, նրա գործունեությունը և թե ինչպես է գտել ու կատարել այս աշխատանքը: Նա նաև հանդես է եկել մի շարք մեներգերի կատարմամբ, նվագակցել է երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի առաջին գլխավոր խմբագիր, Ստամբուլում բնակվող Աննա Գևորգյանը: Վերջինս նաև կատարել է Կոմիտասի մի քանի դաշնամուրային ստեղծագործություններն այդ ժողովածուից: Երաժշտագետ Գոհար Շադյանի բնորոշմամբ. «Դրանք միմիակիցմիմ հատուկ, Կոմիտասյան ոճին բնորոշ դաշնամուրային մանրանվագներ են, որով ընդլայնվում է դաշնամուրային ստեղծագործությունների կոմիտասյան ժառանգությունը»:



Կրոնական ժողովի ատենապետ
Տ. Արամ արք. Աթեշյան, Տիրան Լոքմազյան,
Կաթողիկե Հայոց վիճակավոր
Տ. Լևոն արք. Զեքիյան

2

Московский фестиваль “Посвящение Виктору Мержанову” (к 100-летию со дня рождения)

15 августа 2019 года исполнилось 100 лет со дня рождения пианиста, педагога и просветителя, профессора Московской консерватории Виктора Мержанова. Он создал собственную “мержановскую” школу, среди его учеников более ста лауреатов международных конкурсов.

С 8 по 30 сентября 2019 года в Московской консерватории состоялись концерты, приуроченные к 100-летию со дня рождения Виктора Мержанова. В честь Учителя, Музыканта играли ученики разных лет, коллеги и друзья.

20 сентября 2019 года в фойе партера Большого зала Московской консерватории открылась выставка, подготовленная архивом консерватории к 100-летию со дня рождения В. К. Мержанова.



Александр Малкус, Юрий Слесарев,
Анаит Нерсисян, Виктор Бунин

3

ԴԱՇՆԱԿԱՀԱՐՈՒՀԻՆ Արմինե Սուրենի Սողոմոնյան

Թվում է թե այլևս, հարյուր տարի առաջ տեղի ունեցածն առանձնապես ի՞նչ կապ պիտի ունենա մերօրյա ստեղծագործողի հետ: Սակայն, երբ անհատապես մոտենում ու գրիչ են վերցնում գրելու ստեղծագործողի մասին, ապա չես կարողանում ետ չնայել, որովհետև համարյա թե բոլորի ճակատագրերը գալիս մի կետում բախվում են:

Դաշնակահար, Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դասախոս,՝ դոցենտ, Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցի փոխտնօրեն Արմինե Սողոմոնյանի նախնիներն էլ են Արևմտյան Հայաստանից:



4

ԹՈՒՐԹԻՎՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԱԵԼ Է ԿՈՄԻՏԱՍԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

1 Միջոցառմանը ներկա էին Կրոնական ժողովի ատենապետ Տ. Արամ արք. Աթեշյան և Կաթողիկե Հայոց վիճակավոր Տ. Լևոն արք. Ջեքիյանը, որոնք բարձր գնահատեցին ժողովածուն: Ներկա էին նաև Սև ծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Սահակ Սարգսյանը և մշակութասեր հասարակությունը: Այս մասին տպագրվել է Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթի դեկտեմբերի 2-ի համարում (տես <http://www.jamanak.com/content/թըրքահայ-կենանք/2-12-2019-կեղորոնական-սամուց-միութեան-մէջ-կոմիտասի-ծեռնարկ>):

Տ. Լոքմազյոզյանի վկայմամբ. «Կար նաև մի երաժշտագետ ուսանող Անկարայի համալսարաններից մեկից, որը հատուկ եկել էր Ստամբուլ երկրկա գտնվելու միջոցառմանը: Իմաց, որ պատրաստու՞մ էր ավարտական թեզ Կոմիտասի մասին և շատ հետաքրքրված էր»):


Նշենք, որ թրքերեն ժողովածուն նվիրված է Ստամբուլի «Սալաթ-Նովա» երգչախմբին, որն իր աջակցությունն է ունեցել երկերի հավաքման գործում:

Ի դեպ այդ օրը, Տ. Լոքմազյոզյանի ժողովածուի հետ միասին ներկայացվեց նաև իր կողմից թրքերենով թարգմանված՝ Ռուբեն Գալչյանի «Պատմական Հայաստանի քարտեզներ» գիրքը: Վերջինս ընդգրկում է 25-30 տարբեր երկրների գրադարաններից հավաքած Հայաստանի տարաձառյալնային քարտեզները: Այն հակաքարոզական ծեռնարկ է ընդդեմ թուրքերի, որոնք ասում են, որ Հայաստանը չի եղել քարտեզի վրա: Հետաքրքրական է այն փաստը, որ այստեղ ընդգրկված է նաև Ք.ա. 600 թվականից մնացած կավե սալիկի պատկեր, որն իրենից ներկայացնում է քարտեզ, որտեղ աշխարհը ներկայացված է կլոր, շուրջըլուրդ ծով է և Շշված է երեք երկիր՝ Հայաստան, Ասորեստան և Բաբելոն:

Այս երկու ժողովածուները տպագրել է Ստամբուլի «Փրկիչ» հրատարակչությունը, հրատարակիչ՝ Միհրան Փրկիչ:

«Հրատարակչության տնօրեն Սիիրան Փրկիչը, ով հիմնել է նաև Դերսիմի հայերի միությունը, վերջին տարիներին զբաղվում է նաև գրավաճառությամբ, հիմնականում հայերի և Հայոց Ցեղասպանության հետ կապված գրքերի: Նա մոտ 2 տարի առաջ հիմնադրեց նաև հրատարակչատուն և այժմ հիքն է հրատարակում «նմանատիպ գրքեր», - նշեց Տ. Լոք-ճալցյալան:

Վերջինս վերծանել և հրատարակել է Կոմիտասի գերմանական անտիպ ժառանգությունը, որը պահվում է Ե. Չարենցի անվ գրականության և արվեստի թանգարանի երաժշտական բաժնի պահոցներում: Հեղինակի խոսքով. *«Ես եկա Հայաստան 1990-ական թվականներին և շատ շուտ դիմեցի Ե. Չարենցի անվ. ԳԱԹ Կոմիտասի Պատարագն ուսումնասիրելու համար: Սյր ընթացքում նկատեցի, որ կան մակերեսային տեսակետներ երկեր և սկսեցի հավաքել գերմաներեն երգեր: Սյուրիետև տեսա թրքերեն երկեր, հետո սկսեցի դրանք*



հավաքել:



...ես դրանք արտագրեցի,
մաքրագրեցի, պետք է մշեմ, որ
այնքան էլ դյուրին չէ Կոմիտասի
ծեսագրերի ըմբերումը, որով-
հետև և՛ անընթեռնելի է, և՛ հապշ-
տապ գրված, և բազում սրբագրու-
թյուններ կատարված միևնույն էջի
վրա, որը շատ է դժվարացնում աշ-
խատանքը: Դրա համար, առաջին
հերթին, ընդհանուր տպավորու-
թյուն ունենալու համար, թե ինչ
այնտեղ գրված, պետք է մաքրագ-
րել (տես «Երաժշտական Ճայաստան» անսագրի թիվ 3 (18)
2005 համարում, էջ 35-36):

Որոշները հրատարակված են Կոմիտասի ստեղծագործությունների վերջին հատորներում, բայց ամբողջությամբ՝ դեռ ոչ: Մտադիր ենք հրատարակել մաս թրջական երկերի ժողովածու՝ թրբերենով Թուրքիայում և հայերենով Հայաստանում, ինչպես մաս Կոմիտասի գերմանական երկերի վերոնշյալ ժողովածուին ռուսերեն թարգմանությամբ: Իմ առավելությունն այս գործում այն է, որ Կոմիտասի տիրապետած և ստեղծագործած լեզուներից 3-ին՝ հայերեն, գերմաներեն, թրբերեն, ես տիրապետում եմ և երաժիշտ եմ»:

Կոմիտասի գերմանական երգերի բեմելը Տ. Լոքմազյոզյանը և նրա տիկինը՝ Ծովինար Լոքմազյոզյանը կատարել են էքմիածնում, 1991 թ., Գևորգյան ճեմարանի կլոր դահլիճում, որտեղ Կոմիտաս վարդապետը դաշնամուր է պարապել: Հետո նույն ծրագիրը կատարել են Ստամբուլում՝ 1993 թ., հետո Է. Չարենցի անվ. ԳԱԹ-ում և 2005 թ., Երևանում, Հայդելբերգի համալսարանի Կարոլինա Կամերատա երգչախմբի համերգաշարի կազմում: Վերջինս կատարեց նաև Կոմիտասի գերմանական խմբերգերից. «Առաջին հերթին այս ստեղծագործությունների երաժշտական ֆակտուրան մեծ հասունություն, ամբողջություն, ավարտավածություն ունի»: Երկրորդը՝ ամբողջությամբ կառուցված է XIX դարի հարմոնիաների, մեղեդային հարմոնիկ ինքնուրույն մտածողության վրա, երրորդը՝ գերմաներեն լեզվի հրաշալի և զարմանալի մտածողության զգացողություն կա և՛ տեքստի և երաժշտության միաձուլություն, իսկ չորրորդը՝ առկա է Կոմիտաս վարդապետի երկերին հատուկ մի մեղամաղճոտություն, որտեղ երաժշտությունը բարձրանում, հասնում է զարգացման զգաժնակետին, իսկ այնուհետև իջնում է ցավ պատճառող մի փժակի, որը ցայտում զգացվում է նրա հիշյալ խմբերգերում: Կոմիտաս վարդապետի գերմաներեն երկերն ուսումնասիրելու և ղեկավարելու ժամանակ ես մտավոր և արտահայտչամիջոցների կապեր գտա Ռիխարդ Վագների ու շրջանի ստեղծագործությունների՝ «*5. Vezendorg*» երգերի հետ, որոնցում առկա է այն միտքը, որ երաժշտությունը զարգանալով բարձրանում, հասնում է զագաթնակետին, ապա ընկնում ցավալի մեղամաղճո-

տության մեջ, բայց սա արդեն մոտ 28 տարեկան երիտա-
սարդ մի երաժշտի, ստեղծագործողի համար զարգացածու-
թյան բարձրագույն մակարդակ է, - ճշել է երգչախմբի խմ-
բավար Դեր Ֆրանց Վասերմանը (տես «Երաժշտական Զա-
յախտան» ամսագրի թիվ 3 (18) 2005 համարում, էջ 35):

Տիրան և Ծովիմար Լոքնագյոյզյանները համերգներին հիմնականում փոխն ի փոխ են կատարում Կոմիտասի հաշերեն և գերմաներեն մեներգերը: Տ. Լոքնագյոյզյանի խոսքով. «Ասեմ ինչու, մենք այս երգերը չենք ներկայացնում միայն երաժշտների և երաժշտագետների այլ նաև նրանց համար, ովքեր երաժիշտ չեն, երաժշտական լրթություն չունեն, և դրանով ուզում ենք ընդգծել գերմաներեն և հայերեն երգերի տարբերությունը՝ թե՛ կառուցվածքային, թե՛ մեղեդային, թե՛ բովանդակային, այն՝ ինչը Կոմիտասը ստեղծել է ցայտուն կերպով: Նպատակը դա էր, քանի որ Կոմիտասի գերմաներեն ստեղծագործությունները արմատապես տարբերվում են հայկական երգերից: Պարոն Վասերմանն այն միտքն ասաց, որ այլ երաժիշտներ էլ են արտահայտել, որ այս երգերը՝ նրա և հայկական երաժշտության հետ ոչ մի առնչություն չունեն: Պետք է եզրակացնել, որ Կոմիտասը գերմանական երաժշտությունը գրել է գերմանական ռոգով և գերմաներեն լեզվի առանձնահատկություններով» (տես «Երաժշտական Դայաստան» ամսագրի թիվ 3 (18) 2005 համարում, էջ 36):

Նշենք նաև, որ 2019 թ. մարտի 16-ին Կոմիտասի 150-ամյա հոբելյանի շրջանակներում Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի՝ Կոմիտասի անվ. դահլիճում տեղի ունեցավ Տիրան Լոքմադյոզյանի «Կոմիտաս. զերմանական երկեր» գրքի շնորհանդեսը, բանախոս՝ Գոհար Շագոյան, որի ընթացքում ցուցադրվեցին նաև Կոմիտասի Գերմանիայում ուսումնառության տարիներին առնչվող բնօրինակ փաստաթղթեր և լուսանկարներ (այս ամսին տես «Երաժիշտ» ամսաթերթի 3 (159) 2019 համարում):

Հիշեցնենք, որ Տիրամ Լոքմադյոյանի «Գերմանական երկեր» ժողովածուում հավաքված ստեղծագործությունները Կոմիտասի Բեռլինում 1896-1899 թթ. ուսանած տարիների աշխատանքներն են, որոնք հրատարակվում են համապարփակ ձևով աշխարհում առաջին անգամ: Այստեղ ներկայացված են մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ, ակապելլա երգչախմբային ստեղծագործություններ, դաշնամուրային երկեր, լարային քառյակի համար փոքր ստեղծագործություններ և փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար մի կտոր, ինչպես նաև Կոմիտասի կողմից թարգմանված և մշակված Հայկական Պատարագի մեղեդիներ:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Երաժշտագետ,
«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

8 *Տարվա դադարից հետո իր դռներն է քայուլմ*
Կոնստերվատորիայի Օպերային սուլդիան

2020 թ. երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Ղազարոս Սարյանի անվ. օպերային ստուդիան ճշում է իր հիմնադրման 40-ամյակը: 8 տարվա դադարից հետո ԵՊԿ ղեկավար Սոնա Յովհաննիսյանի նախաձեռնությամբ ստուդիան վերսկսում է իր գործունեությունը:

«Այս տարի պետական մակարդակով նշվում է անվաճի կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի ծննդյան 100-ամյակը: Սա շատ կարևոր հոբելյան է, որովհետև նա 26 տարի շարունակ ղեկավարել է Կոմսերվատորիան, և իր նախաձեռնությամբ էլ բացվել է Օպերային ստուդիան: Այն ժամանակ գործում էր և՛ երգչախումբ, և՛ նվագախումբ: Դժվար տարիներին, երբ ընդատվեց ֆինանսավորումը, Ստուդիայի գործունեությունը ևս խաթարվեց: Այս տարի որոշել ենք վերսկսել մեր աշխատանքները», - մասնովիս մանակ ասաց ԵՊԿ ղեկավոր Սոնա Հովհաննիսյանը՝ Օպերային ստուդիան գործում է առանձնապես ներդրում: Ստուդիան ժամանակի առանձին մուտք, հանդերձար և երաժշտական համար անհրաժեշտ այլ գոտիներ: Տարածքը երեք տրվել է վարձակալության և միայն վերջերս դարձվել Կոմսերվատորիային: Նախատեսվում է կանգնել մահ այդ տարածքը, որպեսզի Ստուդիան սեփական մուտքը և միջավայրը: Ստուդիան ընթերցում էր ներգրավված են ԵՊԿ ուսանողները:

«Տարին նշանավորվելու է Օպերային ստուդիայի կողմից Գ. Դոնիժետտիի «Դոն Պասկուալե» օպերայի հայաստանյան պրեմիերայով, ինչպես նաև 8 համերգից բաղկա-



Օպերային ստուդիայի տնօրեն Չայկ Կարդանյան, ԵՊԿ ղեկավար Սոնա Չոլիաննիսյան, ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնի վարիչ, դոցենտ Կարեն Լավչյան, ԵՊԿ հասարակայնության հետ կապերի պատասխանատու Սոնա Խաչատրյան

ցած համերգաշարով: Ղ. Սարյանի ծննդյան օրը սեպտեմբերի 30-ին կկատարվի Տ. Զուխաջյանի «Լեբլեբիջի» (վերախմբագրված «Կարինե») օպերետող՝ Ղ. Սարյանի գործիքավորմամբ և խմբագրմամբ, որը կներկայացվի մաս 3ա-յա սառնանի մարզերում և Արցախում: Համերգաշարի բացումը տեղի կունենա փետրվարի 12-ին, ժամը 15:00-ին (տես էջ 7, «Երևանյան հայտարարություններ»): Նպատակ ունենալով դառնալ ազգային դիմագծով օպերային թատրոն՝ Օպերային ստուդիայի առաջին համերգային ծրագիրն ընդգրկում է հայկական 10 օպերաներից արիաներ և զուգերգեր (Գևորգ Արմենյանի «Խաչատուր Աբովյան», Լևոն Խոջա-էյնաթյանի «Նամուս», Հարո Ստեփանյանի «Լուսաբացին», Վարդան Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» և այլն): Օպերային ստուդիայի բոլոր ներկայացումներին մուտքը լինելու է ազատ ինչպես ԵՊՀ ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական

Կազմի, այնպես էլ բոլոր երաժշտասերների համար:

«Դոճ Պատկուպէ» օպերան կներկայացվի մայիսին և հունիսին: Բեմադրությունները կիրականացվեն երկու տարբեր կազմերով, որպեսզի ստուդիայի բոլոր արտիստները բեմ բարձրանալու հնարավորություն ունենան: Բացի դրանից, Ստուդիայում չեղյալ կունենան մաս հրավիրյալ արտիստներ», - ասուիսին մշեց Օպերային ստուդիայի տնօրեն Հայկ Վարդանյանը՝ հավելելով, որ այդքանով չեն սահմանափակվելու: Օպերային ստուդիան արդեն պայմանավորվածություններ ունի Փարիզի, Բաստիլի, Ստրասբուրգի, Դյուսելդորֆի, Շտուտգարտի արվեստի ակադեմիաների և այլ հաստատությունների հետ:

ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնի վարիչ,
հոգեմտ Կարեն Լավչյանն իր հերթին նշեց, որ Ստու-
դիայի վերաբացման լուրը մեծ ոգևորությամբ է ըն-
դունվել Կոմսերվատորիայի ուսանողների կողմից,
քանի որ այստեղով անցած ուսանողները լիովին պատ-
րաստ կլինեն մեծ բեմ բարձրանալու: «Մենք մեր ուսանող-
ներից լավագույններին ենք ընտրում և սովորեցնում աշխա-
տել ռեժիսորի, դիրիժորի հետ, աշխատում կերպարի բացա-
հայտման վրա: Ցանկանում են մեծ հպարտությամբ նշել, որ և՛ մեր օպերայի, և՛ միջազգային բեմ դուրս եկած հայ ար-
տիստների մեծամասնությունն այստեղից են սկսել իրենց
գործունեությունը», - նշեց Կարեն Լավչյանը:

<https://anmmmedia.am/hy/news/after-an-eight-year-hiatus-the-conservatorys-opera-studio-opens-its-doors/172>
Նյութը պատրաստեց ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ

Московский фестиваль “Посвящение Виктору Мержанову” (к 100-летию со дня рождения)

1

Виктор Карпович Мержанов (15 августа 1919 – 20 декабря 2012) — легендарный российский пианист, народный артист СССР, профессор, заведующий кафедрой специального фортепиано Московской государственной консерватории им. П. И. Чайковского, занесен на мраморную Доску Почета Московской государственной консерватории, основатель и президент Рахманиновских обществ России, Турции, Болгарии, почетный гражданин города Тамбова, почетный профессор различных музыкальных вузов мира, Академик Белорусской, Болгарской, Польской Академий музыки, член Правления Международного Союза музыкальных деятелей, Всероссийского музыкального общества, Почетный президент объединения педагогов фортепиано, обладатель десятиков орденов и медалей.

Мержанов — пианист, сыгравший около 2500 сольных, симфонических (более 80 дирижеров), камерных концертов в городах России, США, Канады, Норвегии, Швеции, Дании, Финляндии, Австрии, Румынии, Югославии, на Кубе, в Уругвае, Португалии, Греции, Италии, Бельгии, Германии, Польше, Китае, Болгарии и др. Многочисленные грамзаписи и диски, выпущенные в Италии, Японии, России и США.

Активный член жюри самых крупных и престижных Международных конкурсов мира: единственный в России (столь многократно) член жюри одного из главных конкурсов мира: им. Королевы Елизаветы в Брюсселе, а также конкурса им. П.И.Чайковского. инициатор и председатель жюри Международных конкурсов (взрослого и юношеского) и фестивалей им. С. Рахманинова в России, Международных курсов высшего худ. мастерства памяти С. В. Рахманинова. Ежегодно выступал в семинарах Музыкальной академии г. Вроцлава, Международных курсах в Париже, Токио, Лондоне, Хельсинки, Лос-Анджелесе, Салониках, Дубровнике, Веймаре, Душниках, Манчестере, Больцано, во Фрайбурге и Шпайхингене (Германия, постоянно).

Московскую консерваторию Виктор Мержанов окончил в 1941 году с отличием по двум специальностям — “фортепиано” (класс Самуила Фейнберга) и “орган” (класс Александра Гедике). В том же году он ушел добровольцем на фронт. Прошел всю войну. После демобилизации в ноябре 1945 года Мержанов поступил в аспирантуру Московской консерватории.

В 1945 году Виктор Мержанов стал победителем Всесоюзного конкурса музыкантов-исполнителей в Москве (первую премию он разделил со Святославом Рихтером). В 1949-м — лауреатом Международного конкурса пианистов им.Фредерика Шопена в Варшаве. С 1964 года Виктор Мержанов — профессор Московской консерватории. Свою педагогическую деятельность в столичной консерватории он начал еще в 1947 году в качестве ассистента Самуила Фейнберга.

На протяжении всей творческой жизни Виктор Карпович проводил мастер-классы по всему миру — в Южной Корее, США, Японии, Греции, Франции, Финляндии, Германии, Великобритании, Польше, Италии, участвовал в жюри многих международных конкурсов и воспитал целую плеяду талантливых учеников.

С 7 по 17 августа 2019 года в одном из древнейших городов Болгарии, Кюстендилье проходил VII Международный фестиваль “Великие учителя” и V Конкурс пианистов им.



Наталья Деева, Садакацу Ццида, Анаит Нерсисян



Анаит Нерсисян, Светлана Мержанова



Анаит Нерсисян, Александр Соколов, Наталья Деева

Виктора Мержанова. Фестиваль проводится под патронатом мэра Кюстендила Петра Паунова и Посольства Российской Федерации в Республике Болгарии, а также при поддержке представительства Россотрудничества в Болгарии, Национальной музыкальной академии имени Панчо Владигеров, Московской государственной консерватории им. П.И.Чайковского.

На торжественном открытии фестиваля “Великие учителя” выступили лауреаты международных музыкальных конкурсов: Ромео Смилков, Георгий Черкин, Радослав Николов, Светлин Христов, Александр Лиалиос, Жаклина Викторова, Георгий Чиколов и др.

В работе жюри конкурса принимала участие Заслуженная артистка Армении, профессор ЕГК Анаит Нерсисян.

Анаит НЕРСЕСЯН окончила Московскую государственную консерваторию имени П.И. Чайковского и там же ассистентуру—стажировку (класс профессора В.К. Мержанова). Лауреат Закавказского конкурса музыкантов-исполнителей (Баку, 1972), обладательница I премии и золотой медали на Международном конкурсе имени И.С. Баха (Лейпциг, 1980). Гастролировала в республиках бывшего СССР, США, Японии, Канаде и в странах Западной Европы. С 1977 г. преподавала в Ереванской консерватории им. Комитаса в должности профессора. Член жюри многих международных конкурсов, среди них: конкурс им. Балакирева (Краснодар, 2014); “Минск-2014” (Белоруссия, 2014), имени И.С. Баха (Саарбрюкен, Германия), имени С. Рахманинова (Россия), имени А. Хачатуряна (Армения). С 2018 г. — приглашенный профессор токийского университета искусств Геидай (Япония). В 2018 г. артистке присуждена Почетная премия армянского посольства Японии (г. Токио). Записала диски с фортепианными сочинениями И.С. Баха, Д. Шостаковича, С. Фейнберга, Г. Овунца, а также с произведениями армянских композиторов для репертуара музыкальных училищ и детских музыкальных школ. Проводит мастер-классы в Японии, Польше, России.

15 января 2020 года в Москве в Рахманиновском зале в рамках фестиваля “Посвящение Виктору Мержанову” состоялся сольный концерт Анаит Нерсисян. В первом отделении прозвучали: Партита #2 до минор И.С. Баха; 12 прелюдий соч. 34 Д. Шостаковича; во втором отделении “Мержанов и друзья” — Комитас — Р. Андриасян “Весна”; Комитас — Г. Сараджян “Абрбан”; А. Хачатурян Сонатина; А. Бабаджанян Элегия памяти А. Хачатуряна; А. Арутюнян “Ветер пронесся в горах”; “Танец сасунцев”; Э. Мирзоян Две пьесы из

цикла “Альбом для внуки” (“Мариам”, “Игра”); А. Бабаджанян Поэма для фортепиано.

16 января 2020 года в концертном зале имени Н. Я. Мяскового при содействии Министерства культуры РФ и Московской государственной консерватории имени П.И.Чайковского прошел очередной концерт юбилейного фестиваля. Исполнители — выпускники проф. В.К.Мержанова разных лет: доцент Таллинской Академии музыки и театра Ада Куусеокс (Эстония), Заслуженная артистка Армении, профессор Ереванской консерватории Анаит Нерсисян (Армения), Заслуженная артистка России, профессор Московской консерватории Наталья Деева, лауреат международных конкурсов, доцент Московской консерватории Александр Малкус, Лауреат международных конкурсов, солист Московской филармонии Михаил Рыба, лауреаты международных конкурсов Николай Пестов, Михаил Ковалев, Наталья Рахманина. Студенты Московской консерватории, лауреаты Международного конкурса “Великие учителя” им. В.Мержанова (Болгария, 2019) Анна Михайлова (скрипка), Кирилл Смолкин (фортепиано), а также Марлена Мош (вокал). Прозвучали сочинения М. Бруха, П. Чайковского, К. Дебюсси, М. Ковалева, С. Рахманинова, Н. Деева, С. Фейнберга, А. Александрова, А.Тиграняна, Ширина, Ф.Шопена, А.Бабаджаняна.

18 января 2020 в Большом зале Московской консерватории состоялся третий концерт фестиваля. В концерте приняли участие: Симфонический оркестр Министерства обороны Российской Федерации (Главный военный дирижер Вооруженных Сил РФ, Заслуженный артист России, генерал-майор Тимофей Маякин, дирижер — начальник оркестра, Заслуженный артист России, полковник Сергей Дурьгин). Солисты — выпускники класса профессора В.К. Мержанова разных лет: Заслуженная артистка Армении, профессор Анаит Нерсисян (Бетховен Концерт N3 для фортепиано с оркестром до минор, соч. 37); Заслуженная артистка России, профессор Наталья Деева (Рахманинов Концерт N2 для фортепиано с оркестром до минор, соч. 18); победитель III Международного конкурса имени С.В.Рахманинова, доцент Садакацу Ццида, Япония (Концерт N3 для фортепиано с оркестром ре минор, соч. 30).

СОФА АЗНАУРЯН,
композитор, редактор журнала “Музыкальная Армения”

ՀՐԱԺԻՈՏ ԽՈՍԸ Յուրի Հայկի Դավթյանի հիշատակին

1

Փայլուն ավարտելով կոնսերվատորիան դիրիժոր Յուրի Դավթյանը հրավիրվեց Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն:

1980-2000 թթ. եղել է օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր, ղեկավարելով ինչպես հայ դասական կոմպոզիտորների, այնպես էլ արևմտաեվրոպական և ռուս կոմպոզիտորների օպերաներ և բալետներ: Հիշարժան են Տիգրան Չուխաջյանի «Արշակ 2-րդ», Ա. Սպենդիարյանի «Ամաստ», Արմեն Տիգրանյանի «Ամուշ», «Դավիթ Բեկ», ինչպես նաև ժամանակակից հայ կոմպոզիտորներ՝ Ա. Բաբակի «Արծաթե թերթ», Ա. Հարությունյանի «Սայաթ Նովա» օպերաները: Նրա երկացանկում են եղել նաև Վերդիի, Լեոնկավալլոյի, Գլինկայի ստեղծագործությունները: Յուրի Դավթյանն արժանացել է հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, ժողովրդական արտիստի կոչումներին:

3. Դավթյանը որպես գլխավոր դիրիժոր աշխատել է Սարատովի օպերային թատրոնում, ղեկավարել է Ռադոնի և Կենտրոնական ռեպուբլիկայի Սիմֆոնիկ նվագախումբը: Համերգներով հանդես է եկել Ռուսիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում:

1969 թվականից մինչև իր կյանքի վերջը դասավանդեց

Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի օպերային և բալետի ակադեմիական թատրոն: 30 տարի անց ավելի օպերային, սիմֆոնիկ դիրիժորներ: 1979 թվականից պրոֆեսոր էր: Որտեղ էլ որ աշխատեց Յուրի Դավթյանը վայելում էր հարգանք և սեր ոչ միայն իր գործընկերների շրջապատում, այլև բոլոր մարդկանց, ում հետ շփվում էր: Վերջին մեկուկես տասնամյակների ընթացքում իր ամբողջ գիտելիքները ներդրեց երևանի Հայկոյ Պարոնյանի անվ. երաժշտական թատրոնում որպես թատրոնի գլխավոր դիրիժոր:



Հայկ Դավթյան, Յուրի Դավթյան

Պատրաստվում է հրատարակության Յուրի Դավթյանին նվիրված պատկերազարդ մենագրություն գիրքը «ԵՊԿ հրատարակչությունում»: Շուրջ մեկուկես տարիների ընթացքում նրա գրքի հետ կապված աշխատանքը բերկրալի էր: Հունդով լեցուն ինքնակենսագրական և նրա Մարդ տեսակը հիացնում և ոգևորում էր համատեղ աշխատանքում: Հիշատակը վառ Մանստրո:

Դիժոր: Պայծառ, հուճկավոր մարդ, քաղաքացի, ում մարդկային և պրոֆեսիոնալ կերպարը միշտ կմնա իրեն ճանաչողների հիշողության մեջ:

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊԿ պրոֆեսոր,
ԴԵԸ ՆԱԽԱԳԱՀ

Պատրաստվում է հրատարակության Յուրի Դավթյանին նվիրված պատկերազարդ մենագրություն գիրքը «ԵՊԿ հրատարակչությունում»: Շուրջ մեկուկես տարիների ընթացքում նրա գրքի հետ կապված աշխատանքը բերկրալի էր: Հունդով լեցուն ինքնակենսագրական և նրա Մարդ տեսակը հիացնում և ոգևորում էր համատեղ աշխատանքում: Հիշատակը վառ Մանստրո:

Մխիթարական է, որ աշխատանքը հանրագումարի ենթաբերում և երաժշտաբան հանրության սեղանին կորվի մեծ երախտավորի մասին վավերականացված ժողովածու:

Մենագրության կազմող և
մասնագիտական խմբագիր՝
ԳՐԶՐ ՇԱԳՈՅԱՆ

ԴԱՇՆԱԿԱԶԱՐՈՒՄ

Արմինե Սուրենի Սողոմոնյան



1 Հայրական կողմից՝ գորդ-պատմիչ Րաֆֆու արմատներից են սերում, իսկ մայրական կողմից՝ հովնաթանյանների (Նաղաշ Հովնաթան) սերնդից են: Շատերի նման նրա պապերն էլ եղեռնապուրծ, երկար դեգերումներից հետո 1946-ին հասել են Հայրենիք՝ Հայաստան, իսկ տարիներ հետո իզդիրցի հայրն ու թավրիգահայ մայրն ընտանիք են կազմել Երևանում:

Մասնագիտությամբ ատամնաբույժ մայրը՝ Արփիկ Առաքելյանը, որ երաժշտական կրթություն ուներ և դաշնամուր էր նվագում, երկու աղջիկների մոտ էլ վաղ հասակից երաժշտական հակումներ է նկատում: Կարծես նախախնամություն էր, նրանցից ավագը՝ երեք տարեկան Արմինեն ծննդյան օրվա առթիվ խաղալիք դաշնամուր նվեր ստացավ՝ ժամերով խաղում էր ու միաժամանակ փորձում ձայնակել:

Խորհրդային տարիներին հայրը՝ Սուրեն Սողոմոնյանը Հայաստանյայտագիծ իմաստիտուտում գլխավոր մասնագետ էր: Նրա աշխատանքի սահմաններն ընդգրկում էին երկրի ընդերքի, գյուղատնտեսության ու քաղաքաշինության հետ կապված համապարփակ հարցերը, մի բան, որ որևէ առնչություն չուներ երաժշտական աշխարհի հետ: Սակայն դա բոլորովին չէր խոչընդոտում տանն ամենօրյա հնչող դասական երաժշտությանը, ինչը երկու-երեք տարեկան աղջնակների վրա մեծ ազդեցություն էր գործում: Էրգրից բերած ձայնապնակները նախնիներից մնացած ժառանգություն էին՝ Զ. Վերդի, Ժ. Բիզե, Կոմիտաս... վերջինիս ծայրը կրկին լսելու համար փորձիկ Արմինեն համառորեն ստիպում էր մորը մի քանի անգամ դնել ձայնապնակը:

Այլևս կանխորոշելով երեխայի ապագան, հինգ տարեկանում մայրն Արմինեին դաշնամուրի մասնավոր դասերի է տանում: Այսպես, նա մինչև տառերն իմանալը ծանոթանում է նոտագրությանը, հետո սովորում դաշնամուր նվագել: Չայկովսկու անվ. տասնամյա երաժշտական դպրոց ընդունվելիս (1973-1984 թթ.) քննող հանձնաժողովը պարզում է, որ յոթամյա փոքրիկը բացարձակ լսողություն ունի և արդեն բավականին լավ դաշնամուր է նվագում: Տարիներ հետո գերազանցությամբ ավարտելով տասնամյակն ընդունվում է Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա (1984 - 1989 թ.), անվանի մանկավարժ, պրոֆեսոր՝ Աննա Ամբակունյանի դասարանը: Հանրաճանաչ դաշնակահարին ու նվիրյալ մանկավարժին Արմինե Սողոմոնյանն ակնածաքով է հիշում ու շեշտում նրա պրոֆեսիոնալ մոտեցումն ամեն ինչին, նաև, որ ուսումնառության հինգ տարիների ընթացքում յուրաքանչյուր հանդիպում նրա հետ իր համար նորանոր գաղտնիքներ էին բացում: Ստեղծագործություն-

ների մեջ հանդիպող դժվար հաղթահարելի մասերն անպայման անձնական նվագով էր նա ցույց տալիս և հուսադրում, որ ցանկացած խոչընդոտ հաղթահարելի է, սակայն համառության ու աշխատասիրության շնորհիվ:

ՍՍՀՄ-ը տարիներին հանրապետությունները խիստ փոխանագործակցության մեջ էին և բացառություն չէին նաև արվեստի ճյուղերը: Նկատելով սանի արագընթաց առաջադիմությունը, 3-րդ կուրսում Աննա Ամբակունյանը նրան խորհուրդ է տալիս մասնակցել Ռուսաստանում կազմակերպվող համամիութենական երաժշտական հավաքներին: Տամբովում կայացած հերթական հավաքը ճակատագրական էր, որտեղ հանձնախմբի նախագահը հայտնի դաշնակահար Վիկտոր Կարպի Մերժանովն էր: Նրա ուշադրությունից չեն վրիպում երիտասարդ տաղանդավոր դաշնակահարուհու կատարումները, լսումներից հետո մոտենում և անձամբ առաջարկում է մի երկու անգամ դասերի հաճախել իր մոտ, ինչին բնականաբար Արմինե Սողոմոնյանն ուրախությամբ համաձայնում է և նաև ներկայանում, որ Երևանի կոնսերվատորիայի ուսանող է՝ Աննա Ամբակունյանի սանը: Այնուհետև պարզվում է ազգությամբ հայ, Վիկտոր Մերժանովը (Մերժանյան) Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր է և դաշնամուրային մասնագիտական բաժիններից մեկի վարիչը: Հետո արդեն Մերժանովի հետ դասերը դառնում են պարբերաբար և ուսումնառության հետ զուգահեռ շարունակվում:

Կրկնակի պարապմունքների ու տքնաջան աշխատանքի շնորհիվ, երիտասարդ դաշնակահարուհու համար այդ տարիները դարձան կայացման, ինքնահաստատման, մասնագիտական մոր ձեռքբերումների ու դաշնամուրային կատարողական արվեստի նորամուտ գաղտնիքների բացահայտման բուռն շրջան:

Սակայն կարծես ճակատագիրն ինքն էր նախանշում երիտասարդ երաժշտի անելիքներն ու հատուկ հանդիպեցնում երաժշտարվեստում հայտնի ու տաղանդավոր դեմքերի հետ: Նրա Կոմիտասի անվան Վարպետության դասարանի ղեկավարն է դառնում հանրաճանաչ դաշնակահար Հովհաննես Փարաջանյանը՝ նույն ինքը Օճիկի Հայկազի: Հենց նա էլ, 3-րդ կուրսի ուսանող Արմինե Սողոմոնյանին առաջարկում է միանալ իրեն և որպես նվագակցող աշխատել կոնսերվատորիայի սիմֆոնիկ դրիժորության դասարանում, որի ղեկավարն էին Խաչատուրյանն էր, ով ի դեպ մոր էր Մոսկվայից Երևան տեղափոխվել: Ժամանակ անց, էին Խաչատուրյանի ղեկավարությամբ գործող պետական կամերային նվագախումբում Արմինեն սկսեց կատարել նաև դաշնամուրային մենանվագների ու կլավեսինի պարտիաները: Ավելի ուշ, նա սկսեց աշխատել տաղանդավոր դաշնակահար և դրիժոր Վահագն Պապյանի սիմֆոնիկ դրիժորության դասարանում:

Ուսումնառության տարիներին զուգահեռ այսպիսի աշխատանքը փորձառություն էին տալիս Արմինե Սողոմոնյանին և կոնսերվատորիայի ավարտական ելույթի գերազանց գնահատականը դրա վառ ապացույցն է: Քննական հանձնաժողովը գլխավորում էր Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ստիսլավ Սմիրնովը, ով նրա ելույթից հետո մեղմորեն ու բարյացկամ ծափահարեց, ցուցադրելով իր գոհունակությունը: Ասպիրանտուրան ավարտելուց հետո (1989-1991թթ.) Աննա Ամբակունյանի ասիստենտ-ստաժորն էր, հետո աշխատանքի անցավ որպես մասնագիտական դաշնամուրի ամբիոնի դասախոս, հետագայում՝ դոցենտ, միաժամանակ շարունակելով ելույթները Հայրենիքում և արտերկրում: Հանդես եկավ մի շարք երկրներում՝ Ֆրանսիա, Ավստրալիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, Իսպանիա, Պորտուգալիա, Լիտվա և այլն:

Հասունացել էր պահը և Արմինե Սողոմոնյանը հստակ

որոշում կայացրեց՝ համերգային գործունեության, կոնսերվատորիայի մակավարժական աշխատանքի հետ զուգահեռ իր բազմամյա փորձը փոխանցել նաև մանուկ սերնդին: Այս գործունեությունը նա սկսեց Երևանի Ավետ Տերտերյանի անվան երաժշտական դպրոցից (2006-2017 թթ.), ուր մանկավարժական գործունեությունը մեծ հաջողությամբ համատեղում էր փոխտնօրենի պաշտոնի հետ և իր նպաստը բերում երաժշտական կրթության ասպարեզում: Այնուհետև տեղափոխվեց Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոց, ուր նույնպես դասավանդելուց զուգահեռ վերջերս ստանձնեց նաև փոխտնօրենի պաշտոնը:

2019 թ. նոյեմբերի 4-ին Կամերային տանը հուշ-համերգ էր՝ նվիրված Աննա Ամբակունյանի ծննդյան 100-ամյակին: Մասնակիցները հիշում ու մեծարում էին տաղանդավոր դաշնակահարին ու մեծավաստակ ուսուցչին: Բնականաբար դրանց թվում էր նաև Արմինե Սողոմոնյանը, ով իր փայլուն կատարումներով արժանի մատուցեց սիրելի մանկավարժին: «Արվեստը կեղծիք չի սիրում»։ Ուսուցչի խոսքերն է հիշում նվիրյալ սանը համերգից հետո ու համոզիչ մեկնաբանում, որ Աննա Ամբակունյանն ազնիվ էր ու ճշմարտախոս, ինչն առաջնահերթություն էր արվեստագետի համար, այսպիսի մոտեցման պարագայում արվեստագետը միշտ մնում է իր բարձրության վրա:

Կատարողական ու ստեղծագործական բուռն կյանքում սակայն իրենց յուրօրինակությամբ առանձնացան ֆրանսիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցած համերգային շրջագայությունները: Ֆիզիկապես հեռու ապրող, սակայն երաժշտապես միշտ միասնական քույրեր՝ Արմինե և Անահիտ Սողոմոնյանները համերգների ժամանակ հատկապես շեշտը դնում էին զուգանվագ կատարումների վրա, ինչը բարձր էր գնահատում ֆրանսիացի հանդիսատեսը: Հատկանշական է, որ Անահիտ Սողոմոնյանը նույնպես սովորել է Չայկովսկու անվ. երաժշտական տասնամյա դպրոցի դաշնամուրային բաժնում, ուր նրանք առաջին զուգանվագ ելույթն են ունեցել: Հետո ավարտել է Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան (1988-1993 թթ.), այնուհետև բնակություն հաստատել Ֆրանսիայում: Այստեղ ավարտել է Լիոնի բարձրագույն կոնսերվատորիան (1994-1998 թթ.):

Ֆրանսիայում (1998 թ.), հերթական համերգի ժամանակ Արմինե և Անահիտ Սողոմոնյանները հնչեցրեցին ֆրանսիացի կոմպոզիտոր Դարիուս Միոյի «Սկարամուշ» զուգանվագը, որի կատարումը բուռն ընդունելության արժանացավ: Համերգի ավարտին ի գարմանս բոլորի պարզ դարձավ, որ հանդիսատեսի շարքերում էր նաև Դարիուս Միոյի 96-ամյա այրին: Ժամանակ անց տիկին Միոյն նամակով առաջարկեց քույրերին զուգանվագը անվանակոչել ֆրանսիացի կոմպոզիտորի անունով: Երկուստեք փոխհամաձայնությամբ դաշնամուրային դեռ անանուն զուգանվագը կնքվեց Դարիուս Միոյի անունով՝ «Darius Milhaud» («Դարիուս Միոյ դաշնամուրային դուետ»):

Արդեն հանրաճանաչ զուգանվագն ունի ֆրանսիացի գործակալ, ով զբաղվում է նրանց համերգային գործունեությամբ: Նրա շնորհիվ ծայնագրվել է ձայներիզ (CD), ունեն ամբողջական համերգների տեսաձայնագրություններ (DVD), այդ թվում՝ Փարիզի հանրապետ Կորտոյի անվան դալիժոնում կայացած համերգը, իսկ 2017-ին տեսաձայնագրել են ևս մեկը՝ առանձնացված ծրագրով՝ որն ընդգրկում է ռոմանտիզմի դարաշրջանի (XIX դարի վերջ XX դարասկզբի) ֆրանսիացի կին կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Հանրաճանաչ դաշնակահար ու մանկավարժ Արմինե Սողոմոնյանի ամեն օրն սկսվում ու ավարտվում է դաշնամուրի ուղեկցությամբ, սակայն ինչ զարմանալի բան կարող ենք տեսնել դրանում, երբ դեռ երեք տարեկանում նա խաղալիքներից ընտրեց դաշնամուրը, իսկ մինչև տառեր սովորելը տիրապետեց նոտաներին ու դաշնամուր նվագելուն: Արվեստագետներ կան, որոնց կյանքը կարծես ի վերուստ կանխորոշված է և նրանք դրան ոչ միայն դեմ չեն, այլ խոհեմաբար ու անխոնջ ծառայում են այդ կոչմանը: Ասեք, որ երջանկությունն այն ձև ունի... Արմինե Սողոմոնյան այլ կարծիք ունի. «Մարդը կարող է դեմ գնալ ամենքին ու ամեն ինչին, սակայն ոչ բնությանը»:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Քանոնահարուհի,
ժուռնալիստ



Անահիտ և Արմինե Սողոմոնյաններ



Արմինե Սողոմոնյանը Դարիուս Միոյի տիկնոջ հետ



“Земля детей”

В Санкт–Петербурге прошел 30–й Международный музыкальный фестиваль "Земля детей". Чем же порадовал фестиваль в год своего тридцатилетия? Прежде всего тем, что стал еще... моложе! Действительно, в каждом из двадцати концертов и спектаклей фестиваля главную роль играли дети – от семи лет и до окончания школьного возраста. А самому юному участнику выставки художественных работ недавно исполнилось всего четыре года! Юные композиторы, поэты, художники, актеры и, конечно же, музыканты–исполнители представили свое мастерство своим сверстникам, родителям и гостям концертных и театральных залов.

С 2018 года открытие фестиваля проходит в большом современном концертном зале "Карнавал". 2 ноября 2019 года около сотни юных музыкантов, составивших сводный оркестр "Вокруг света" под руководством композитора и дирижера Ильи Кузнецова, представили многочисленной публике увлекательное музыкальное путешествие по разным странам. Некоторые произведения были написаны петербургскими композиторами специально к этому концерту и специально для этого уникального состава, объединившего оркестры Санкт–Петербургского городского дворца творчества юных и Санкт–Петербургской детской школы искусств им. М.И.Глинки. Прозвучал и ряд сочинений, проверенных временем. Юные музыканты и зрители прикоснулись к культуре Японии, Греции, Испании, Ирландии, Африки, Австралии, России и Кавказа. Изюминкой концерта стали красочные костюмы оркестрантов, звучание австралийской трубы диджериду и выступление петербургской художницы Марии Родинской, создавшей на сцене во время концерта красочную картину на холсте!

По уже сложившейся традиции петербургские художники объединения "Victoria Artis" ("Победа искусства") приготовили в Доме композиторов (Большая Морская, д. 45) выставку картин и скульптур, тесно связанную с тематическими концертными программами фестиваля. Впервые в выставке приняли участие ученики художественных школ, училищ и студий. Выставка, конечно же, будет продлена до начала еще одного крупного фестиваля Союза композиторов Санкт–

Петербурга – "Петербургская музыкальная весна", который состоится в мае 2020 года.

Как показала практика, наиболее посещаемыми мероприятиями фестиваля являются спектакли детских музыкальных театров. Зал Дома композиторов на вечере детских мюзиклов "Музыкальные сказки" 3 ноября был переполнен. Зрители дошкольного возраста (и, конечно, их родители) слушали с огромным интересом. Можно смело порадоваться за будущее петербургской публики! А вот концертный зал "Время" (пр. Стачек, д. 105) так и не смог 10 ноября вместить всех желающих посмотреть спектакль "Игра в Три мушкетера" в постановке Детского музыкального театра имени Виктора Резникова. Спектакль встретил горячий прием у публики и получил много восторженных отзывов. На следующем фестивале мы обязательно продолжим сотрудничество с этим замечательным театром, а также с другими детскими театральными коллективами, в том числе и с состоящим детским театром оперы! А чтобы регулировать поток зрителей, придется сделать предварительную регистрацию: ведь по традиции вход на мероприятия фестиваля "Земля детей" бесплатный!

В этом нам поможет интернет. Полгода назад талантливыми музыкантами Алиной Никитенко и Евгенией Петровой была создана группа ВКонтакте "Земля детей", благодаря которой фестивалю удалось провести фотоконкурс "По рекам и каналам Петербурга", конкурс статей и слушательских отзывов "Музыкальный журналист", а также проинформировать участников об интересных предложениях и анонсировать события фестиваля для широкой публики. В течение года в этой группе будут появляться новые предложения для всех, кому интересен фестиваль. А таких людей становится все больше и больше!

И все же главными мероприятиями фестиваля "Земля детей" являются концерты. Достаточно одного перечисления их названий, чтобы увидеть разнообразие творческих идей, столь необходимое детям: "Поэзия и музыка города" – концерт–встреча петербургских поэтов и музыкантов; "Моя любимая книжка" – концерт из произведений юных композиторов России, Армении и Франции; "Петербургский

музыкальный Олимп" – выступления победителей детских и юношеских музыкальных конкурсов; "По рекам и каналам Петербурга" – концерт–путешествие с презентацией работ и награждением победителей фотоконкурса "По рекам и каналам Петербурга – 2019"; "Семь струн" – концерт–состязание струнных инструментов (европейских и русских народных); "Наполним дом наш голосами" – концерт музыки для вокальных и вокально–хоровых ансамблей; "Что услышал композитор" – полет фантазии; "Неизвестные известные" – концерт из редко исполняемых произведений П. Чайковского, А. Глазунова, И. Стравинского, В. Гаврилина, Ю. Фалика, Ж. Металлиди.

По традиции фестиваль завершился красочным концертом "Хоровой парад" в концертном зале Академической капеллы Санкт–Петербурга (это единственный концерт фестиваля, где необходимо приобретать билеты или получать приглашения). А теперь уже полным ходом идет подготовка к следующему, 31–му фестивалю, который состоится в начале ноября

2020 года, – проходят встречи руководства фестиваля с руководителями детских театров, исполнительских коллективов и музыкальных конкурсов, задумываются новые конкурсы и розыгрыши призов, а также публикуются фотографии и видеозаписи, сделанные во время концертов и спектаклей в этом году. Весело и безостановочно вертится Земля – Земля детей!

ЕВГЕНИЙ ПЕТРОВ,
композитор,

председатель художественного совета фестиваля,
Санкт–Петербургский Музыкальный вестник, N 01 (173),
январь 2020 г

<https://nstar-spb.ru/musical/print/article/zemlya-detey%FF%ED%E220?fbclid>

ԴՐԵՃԴԵՆՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ



Ռուզան Մանթաշյան

Օպերային երգչուհի Ռուզան Մանթաշյանին հայաստանյայտյան թիրախ դարձրած ադրբեջանցի տենոր Յուսիֆ Էյվազովի «պինդ» թիկունքը ջարդվեց: Դրեզդենի *Semper Opera Ball*-ի այս տարվա բացման արարողությանը հատկապես հայերս անհամբերությամբ էինք սպասում: Ռուզան Մանթաշյանը երգեց Չայկովսկու «Եվգենի Օնեգինից» Տառյանայի դերերգը, մինչդեռ ընդամենը մեկ ամիս առաջ նրա ելույթը կասկածի տակ էր: Կասկածի տակ էր միայն այն պատճառով, որ Էյվազովը հրաժարվել էր նրա հետ երգել, որովհետև երգչուհին հայ է, ավելի՛ն՝ հայտարարել էր, թե իբր Դրեզդենի օպերան Ռուզան Մանթաշյանի հետ պայմանագիր չի կնքել: Այսինքն՝ Էյվազովը ոչ միայն իր, այլև մի ամբողջ թատրոնի անունից էր հայտարարություն արել, ու որ զարմանալի է՝ *Semper Opera Ball*-ի գեղարվեստական ղեկավարը պաշտպանել էր նրան:

Ով էր սուտ, ով ճիշտ՝ ապացուցվեց փետրվարի 7-ի համերգին, երբ Ռուզան Մանթաշյանը ծայրի և տեսքի ամբողջ շքեղությամբ բեմ դուրս եկավ ու փայլուն ելույթ ունեցավ: Իսկ անցած մեկ ամսվա ընթացքում ինչքան ջրեր հոսեցին, ի՞նչ պայքար մղվեց՝ հանուն արդարության հաղթանակի, հանուն Ռուզան Մանթաշյանի ելույթի:

Էյվազովի հայտարարությանն առաջինն արձագանքած ու բողոքի ծայն բարձրացրած ՀՀ ժողովրդական արտիստուհի Հասմիկ Պապյանի պայքարը հաջողությամբ պսակվեց: Երգչուհին հետևողական եղավ. նրան միացան երաժշտական աշխարհի ներկայացուցիչներն ու այլ ճանաչված դեմքեր: Միաժամուռ պայքարն արդյունք տվեց: *Semper Opera Ball*-ի ղեկավարությունը ներողություն խնդրեց Ռուզան Մանթաշյանից ու վերականգնեց նրա ելույթի իրավունքը: Իր պայքարի պտուղները, բնական է, որ առաջինը վայելեց Հասմիկ Պապյանը:

«Ես 30 տարուց ավելի Եվրոպայում եմ ապրում, քաջատեղյակ եմ անդրկուլիսյան տարատեսակ անցուղարձերին: Եթե արդար ես, կարող ես հուսալ, որ արդարությունը կհաղթի: Ռուզան Մանթաշյանի ելույթն ամբողջ պարահանդեսի ամենահաջողված կատարումը կարելի է համարել. թե՛ ծայրը, թե՛ հագուստն ու զարդերը, անտարակույս, տարբերվում էին մյուսներից», - Ռուզան Մանթաշյանի ելույթից հետո ասել է Հասմիկ Պապյանը: Մինչև այս սենսացիոն դիպվածը՝ նա չի ծանաչել Ռուզանին, նրա կենդանի կատարումները լսած չի եղել, բայց երևույթն ինքնին անթույլատրելի ու դատապարտելի է եղել, ու երգչուհին վճռել է չլռել: Ի վերջո, նախադեպերը քիչ չեն եղել:

«Միշտ չէ, որ ուժը և փողը որոշիչ կարող են լինել: Անթույլատրելի էր, որ մենք հերթական անգամ պարտված և գլխահակ հեռանալինք՝ ասպարեզը թողնելով իրենք իրենց «ամենակարող» հռչակած ամբարտավաններին: ...Նույնը կատարվեց Հենրիխ Մխիթարյանի և մեր շախմատիստուհու հետ, երբ թույլ չտվեցին նրանց Բաբու մեկնել: Եթե ժամանակին բողոքի ծայն բարձրացվեր, հնարավոր էր և հասնել այդ մրցաշարերի չեղարկմանը: Պետք է քաղաքակիրթ կերպով պայքարել, ու, ինչպես տեսանք, Ռուզան Մանթաշյանի հանդեպ անարդար վարվողներն իրենց սխալն ընդունեցին: Մենք մեր արարքով մուծիսկ նրանց դեմքը փրկեցինք», - հաղթանակն այսպես գնահատեց Հասմիկ Պապյանը:

Եվրոպական ու դրեզդենյան երաժշտական համությունը, համերգի մասնակիցներն ու անգամ Յուսիֆ Էյվազովն իրենց այնպես են պահել, կարծես ոչինչ չի եղել: Նման դրսևորումը Եվրոպային բնորոշ է: Կրակի վրա յուղ չեն լցնում, անցածն անցած է: Բնական է, նորից փորձիլ եղածը չի կարելի. դա կվնասի նախ և առաջ մեր երգչուհուն: Կարևորը՝ իրենց անպատժելի ու ամենակարող կարծողներն այսուհետև կիմանան, որ բիրտ, անօրինական ու խտրական քայլերի պատասխանը կարող է լինել կիրթ, ծանրակշիռ ու շատ դիպուկ:

ՆԱԽԻ ՅԱՆ

<https://azg.am/AM/culture/2020021404>

Այս տարի լրանում է «Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակը: Ներկայացնում ենք հիմնադրի ԵՊԿ պրոֆեսոր Սերգեյ Սարաջյանի շնորհավորանքը

Շնորհավորում եմ մեզ բոլորիս «Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյա գործունեության առթիվ:

Ամսաթերթը բացվեց հեշտորթյամբ, ընդամենը՝ մեկ հրամանով, որովհետև նախապես «ԵՊԿ հրապարակչությունն» էինք արեղծել, որի հիմնադրման ընթացքը երկու տարվա դժվարություններով ճանապարհ էր, երբ կոնսերվատորիան 2003-ին դադարեց ՊՈԱԿ և հասարակվեց ՀԼՄ-ների օրենքը և հնարավորություն ընձեռնվեց արվեստի բուհերին էլ ունենալ հրապարակչություն: Եվ վերջապես հիմնադրվեց «ԵՊԿ հրապարակչությունը»՝ 2004-ին հունվարի 28-ի գիտական խորհրդի հաստատմամբ: Կազմավորված խմբագրության հիման վրա՝ արդեն 1998-ին հիմնադրած «Երաժշտական Հայաստան» ամսագրի քաղալով էլ արեղծվեց և՛ հրապարակչությունը և մեկ տարի և մի քանի ամիսներ հետո 2005-ի դեկտեմբերի 25-ին՝ և՛ «Երաժիշտ» ամսաթերթը: Տեղեցին տարիներ կոնսերվատորիայում մասնագիտական երաժշտական մասով արեղծելու համար, սակայն արդյունքն արդարացին: Հրապարակչական գործի հիմնադիրների, պարվարածան խմբագիրների երկու սերունդների շնորհիվ: Եվ պարտվեցին մինչև հիմա էլ քաղում ենք բոլորս: Հիանում եմ, նայելով այն տարեգրությանը, որ արեղծվեց թերթի շնորհիվ երաժշտական կյանքի լուսաբանման ու անցուղարշի արշավագրումով, իսկ գիտական միտքը շարունակվում է արտացոլվել ամսագրում և, երբ հեղադարձ հայացք ես չգտնեմ տեսնում եմ, թե որքան մեծ աշխատանք է կատարվել հեղինակների, խմբագրության քարեխիղճ աշխատանքի շնորհիվ: Եվ նաև կրթվել են ու որպես խմբագիրներ դասարիարակվել երկարամյա փորձառու խմբագիրների առկայության դեպքում՝ հենց երաժշտագիտ շրջանավարտները, թերթի գլխավոր խմբագիրները, ովքեր հրավիրվում էին աշխատանքի հիմնադիր հրապարակիչ և գլխավոր խմբագրի կողմից: Շնորհավորենք խմբագրության բոլոր ժամանակների աշխատակիցներին: Հիշենք գլխավոր խմբագիրներին. առաջինն էր՝ Աննա Գևորգյանը, այնուհետև կարճ ժամանակով աշխատեց Տաթև Անիկյանը, մինչև այսօր իր հողվածներով համագործակցում է Հասմիկ Համբարյանը, հեղադալում Շուշան Արվազյանը և երկարամյակից այսօր էլ գործում է Արմինե Արդյանը: Նրանք բոլորը այս տարիներին իրենց մասնագիտական աճն են ունեցել շարունակելով իրենց ճանապարհը թե՛ Հայրենիքում և թե՛ արտերկրներում:

Անկյունում դրված տարա է,
Ռ՝վ է տեղը՝ չգիտեմ,
Չգնայած ամեն անցնող դարձնողը
Ցանկանում է այն տանել:
Գուցե այն քո՞նն է
Բն տարան է,
Գուցե տանե՞ս, քաղես մի տեղ

Որ տարայի հետ մեկտեղ
Մի օր քեզ էլ կթաղեն:

Եվ տարան այս մնում է.
Դու էլ չկաս, բայց նա կա:
Միթե այսպես է օրենքը.
Դու գնում ես,
Իսկ նա կա:

ԼՈՒՄԻԿ

Կոմիտասի անվ. ազգային քառյակը 95 տարեկան է...
հետադարձ հայացք դեպի 2019 թվականի հայ մշակույթի նշանոդը

1 Նախորդ տարվա հայ մշակույթի հորելյանա-կան արժեքների սանդղակը համալրվեց Կոմիտասի անվ. ազգային քառյակի 95-ամյա տարեդարձով: Անգ-նահատելի էր նաև նախորդ տարվա կտրվածքով ՀՀ Կրթու-թյան, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ նոյեմբերի 19-ին, Ա. Խաչատրյան մեծ համերգասրահում կազմակերպած Կոմիտաս քառյակի ելույթը, որը նվիրված էր կվարտետի հիմնադիր, ականա-վոր ջութակահար Ավետ Գաբրիելյանի 120-ամյա հորելյա-նին:

«Կվարտետի համար մեկ գործը պետք է լինի, իսկ մնա-ցած ամեն ինչը հետո»: Այսպես էր արտահայտվել իր ժա-մանակին Կոմիտաս քառյակի մեծ Նահապետը, երբ 1924 թ. նոյեմբերին, Մոսկվայի կոնսերվատորիայի հայ տաղանդա-վոր ուսանողներից (Ավետ Գաբրիելյան 1-ին ջութակ, Լևոն Օհանջանյան՝ 2-րդ ջութակ, Միքայել Տերյան՝ ալտ, Սար-գիս Ալամազյան՝ թավջութակ) ստեղծվեց հայ առաջին լա-րային քառյակը:

Ուստի սերմանելով երիտասարդ խորհրդային կվարտե-տային երաժշտության հիմնահողը, Ավետ Գաբրիելյանը մի-աժամանակ դարձավ հայրենի դասական երաժշտության ավանդույթների հավատարիմ հետնորդը, ում բուն «գաբ-րիելյանական» առողջ, ռեալ մտածելակերպը հետագայում հանդիսացավ այն խթանը, որը դուրս եկավ նաև միջազգա-յին ասպարեզ: Այդ առումով, այսօր գրեթե մեկ դարյա պատմություն ունեցող Կոմիտասի անվ. ազգային լարային քառյակն իր բեղմնավոր գործունեությամբ մարմնավորում է այն առասպելական կապը, որը խորհրդանշում է անցյալի և ներկայի տարբեր սերունդների լինելիության արգասիքը հայ և համաշխարհային մշակույթներում:

Քառյակի այսօրվա գործող կազմը (ՀՀ ժողովրդական արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր Էդուարդ Թադևոսյան՝ 1-ին ջութակ, միջազ-գային մրցույթների դափնեկիր Սյուզի Երիցյան՝ 2-րդ ջու-թակ, ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր, Ալեք-սանդր Կոստանյան՝ ալտ, հանրապետական մրցույթների դափնեկիր Անժելա Սարգսյան՝ թավջութակ) ամբողջ 2019-ի ընթացքում ավելի քան 30 համերգ է անցկացրել թե՛ հայրե-նի զանազան բեմահարթակներում և թե՛ արտերկրի բարձ-րակարգ դահլիճներում: Իսկ Կոմիտասի քառյակի վեհաշ-ուք և միակուռ հանդեսը, որը կայացավ 2019 թ. դեկտեմբե-



րի 13-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հանդիսությունների ծյունավալը համերգասրահում արժանացավ լսարանի ջերմ ընդունելությանը և կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրեղի Բ հատուկեմտ պատվո համբույրին մեր բարձրարժեք տե-րա-ժիշտ-կատարողներին:

- Պարոն Թադևոսյան, ինչպե՞ս կազմակերպվեց այս հրաշագեղ համերգը:

- Առաջնահերթ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել իմ և քառյակի լավ բարեկամ Գարեն Գյոզյանին և Վեհափառին, որոնց շնորհիվ կայացավ այս պատմական միջոցառումը:

- Արդեն կես դար է Դուք, կարելի է ասել հանդիսաճուճ եք Կոմիտասի անվ. քառյակի 1-ին ջութակահարը միաժա-մանակ կատարելով գեղարվեստական ղեկավարի պար-տականությունները: Ի՞նչ զգացում եք ապրում ներկա պա-հին և ո՞ւմ եք համարում Ձեր կարիերայի աստղանիշ-ուղե-ցույցը:

- Նախ և առաջ հպարտ եմ, որ այսօր կանգնած եմ այս հոյակերտ մեսրոպատառ ծեմասրահում և պատվով ներկա-յացնում եմ Կոմիտասի անունը կրող քառյակի անցած ու-ղին:

Իմ ստեղծագործական գործունեության մեջ իր լուրջ հետքն է թողել Ավետ Գաբրիելյանը, ում հետ ինձ բախտ է վիճակվել ծանոթանալու դեռևս մանկության տարիներից: Նրա էսթետիկական սկզբունքներն ունեցան իրենց ազդե-ցությունն իմ աշխարհըմբռնումների վրա իբրև արվեստա-գետի: Ավետ Գաբրիելյանն այն մեծություններից էր, ով

1970 թ. ինձ հրավիրելով Կոմիտասի անվ. քառյակ, սկզբ-նական շրջանում որպես 2-րդ ջութակահար, արդեն 1976 թ. մեր սերտ ստեղծագործական կապի հետևանքով հանձնեց ինձ իր Գվարներիի ջութակը՝ առաջարկելով 1-ին ջութակա-հարի իր տեղը:

- Վերոհիշյալ երեկոյի ընթացքում հնչեցին Կոմիտասի մեղմանուշ մեղեդիները՝ Սարգիս Ալամազյանի մշակ-մամբ: Կոմիտասի այդ գողտրիկ կատարումները համալր-ված էին հայրենի բնության, սրբավայրերի իրար հաջորդող տեսանյութերով, որը պատրաստել էր նույն Գարեն Գյոզ-յանը, ով եկել էր Իտալիայից: Ի՞նչ եք կարծում, ինչու՞մ է կայանում Կոմիտասի առեղծվածը:

- Գիտեք, ինձ բախտ է վիճակվել լինել աշխարհի ավելի քան 50 երկրներում: Այդ առումով պետք է խոստովանեմ մի երևույթի մասին. Մեր կվարտետի միջազգային կատարո-ղական փորձը ցույց է տալիս, որ լինի դա <սառք> Շվեդի-այում, թե՛ Աֆրիկայում, կամ էլ Հնդկաստանում, Կոմիտա-սին ամենուրեք ընդունում են որպես իրենցը: Հիշում եմ, հենց նույն Շվեդիայում, մի գիշերային մարաթոնի ժամա-նակ, որը տևեց երեկոյան ժամը 19.00-ից մինչև առավոտ-յան ժ. 7.00, երբ մեր կատարմամբ հնչեց Կոմիտաս, ապա բոլորն անգամ հոգնած լինելով սկսեցին պարել: Նույնը կարելի է ասել, որ մեզ հետ պատահեց Մոզամբիկում, երբ մի գեր կին, մեջքին կապած երեխայով, ինքնամոռաց պա-րում էր <Վաղարշապատի պարի>՝ ներքո: Գործն ավարտե-լուն պես նա սկսեց արտահայտել իր դժգոհությունը, թե ին-չո՞ւ այդ ամենն այդքան կարճ տևեց՝ ընդամենը 4 րոպե:

Ուստի այս պարզ օրինակներն, ինչ խոսք, մեզ բոլորիս իրավունք են վերապահում փաստագրելու այն հանգա-մանքը, որ Կոմիտասը ոչ միայն համազգային, հոգևոր ար-ժեք է, այլ նաև համամարդկային մեծություն է: Եվ համա-պատասխանորեն իր թողած ժառանգության հետ էլ պետք է վարվել շատ նուրբ և զգուշորեն: Եվ իմ կարծիքով, հենց Սարգիս Ալամազյանի նուրբ ճաշակի, նրա կվարտետային գործիքներին տիրապետելու բարձր կարողության, քառյա-կային երաժշտության խորը իմացության շնորհիվ էր, որ Կոմիտասյան գոհարները վերապրեցին յուրովի և իրենց ու-րույն տեղը գտան հայ կվարտետի դարոցի նշանոդում: Ասածիս ավելացնեմ, որ Կոմիտասը մեր երաժշտության խիղճն է, մաքրությունն ու վեհությունը:

ՆԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Երաժշտագետ, ԵՊԿ թանգարանի վարիչ

Սոֆյա Միքայելյանի գործունեության շուրջ

1 Մրցույթներ - 1. «Grand music art» Երաժիշտնե-րի 6-րդ Միջազգային մրցույթ, մասնակցություն երեք անվանակարգերում՝ 1. Կոմպոզիտոր՝ «Ար-տացույցում երեք հայելիներում», 3-րդ մրցանակ: 2. Որպես դաշնակահար՝ Ս. Միքայելյան «Պոլիֆոնիկ սյուիտ», «Հու-մորեսկ», 3-րդ մրցանակ, 3. «MEGEDAS» անսամբլ՝ Գեորգի Մուրադխանյան (ֆլեյտա), Դավիթ Գրիգորյան (ուդ), Մես-րոպ Խալաթյան (դափ), Սոֆյա Միքայելյան (դաշնամուր, գեղարվեստական ղեկավար և հեղինակ) «Կվարտետ ֆլեյ-տայի, ուդի, դափի և դաշնամուրի համար», 2-րդ մրցանակ, ՌԴ, Մոսկվա, դիստանցիոն, 26.02.2019 թ.-11.03.2019 թ.:

Գիտաժողովներ, փառատոներ - 1. «Петербургская музыкальная весна» փառատոնում որպես մենակատար և որպես կոնցերտմայստեր (մենակատար՝ միջազգային մր-ցույթների դափնեկիր՝ Ալեքսանդրա Կորոբկինա, ջութակ), ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Կոմպոզիտորների Միության դահլիճ, 11.05.2019 թ.:

2. Բարեգործական համերգ հոգուտ Հայաստանում՝ «Մարիա» ռադիոկայանի, որպես մենակատար (դաշնա-մուր): Ծրագրում՝ Կոմիտաս): ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Լուրդի Աստվածամոր եկեղեցու դահլիճ, 18.05.2019

3. Համերգ՝ նվիրված Հովհաննես Աստվածաբանի հի-շատական, ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Հովհաննես Աստվա-ծաբանի տաճար, Լեռնշինակոյե Պողկորյե: Ծրագրում՝ Կո-միտաս, Ս. Միքայելյանը հանդես է եկել որպես երգչուհի, 21.05.2019 թ.:

4. Կոմիտաս, «Անլռելի զանգակատուն», ծրագրում՝ Կոմիտաս, Սանկտ-Պետերբուրգի հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, հատվածներ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն», պոեմից: Ս. Միքայելյանը հան-դես է եկել որպես կազմակերպիչ, համերգի վարող, ընթեր-ցող, մենակատար, կոմպոզիտոր, կոնցերտմայստեր (Ալեք-սանդրա Կորոբկինա (ջութակ), Ելենա Իգուտտի, սոպրանո), որպես դիրիժոր, գեղարվեստական ղեկավար (կատարող-ներ՝ Սարֆա Լադչենկո, ֆլեյտա, Վարդան Հարությունյան և աշակերտներ, դուդուկ): ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Կոմ-պոզիտորների Միության դահլիճ, 26.09.2019

5. Գավրիլին-80, որպես կոնցերտմայստեր (Ելենա Իգուտտի, սոպրանո), ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Կոմպոզի-տորների Միության դահլիճ, 29.10.2019 թ.:

6. «Земля детей» 30-րդ միջազգային փառատոնի բա-ցում, համերգ «Вокруг света», որպես Հայաստանը ներկա-յացնող կոմպոզիտոր (միացյալ նվագախումբ, դիրիժոր՝ Իլ-յա Կուզնեցով), ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, «Կարնավալ» համերգային դահլիճ, 2.11.2019 թ.:

7. «Земля детей» 30-րդ միջ-ազգային փառատոն, «Իմ սիրելի գիրքը» համերգ, որպես Հայաս-տանի կոմպոզիտորների միու-թյան ներկայացուցիչ և կազմա-կերպիչ, մենակատար, ներկայաց-րել է հայ պատանի կոմպոզիտոր-ների՝ Էվալարդ Միրզոյանի անվ. 6-րդ մրցույթի հաղթողների, ստեղ-ծագործությունները: ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ, Կոմպոզիտորների Միության դահլիճ, 05.11.2019 թ.:

Վարպետության դաս՝ «Կոմի-տաս-150 և Թումանյան-150», մեկ երգի ուսուցում՝ Սոֆյա Միքայել-յան, «Խնոցի», մեկ պարի ուսու-ցում՝ Սոֆյա Միքայելյան «Կուժե-րով պար», ՌԴ, ք. Պուշկին, Հայկական Կիրակնօրյա դպրո-ցում, 23.02.2019 թ.:

Անդրադառնալով Ս. Միքայելյանի բազմաբեղուն գոր-ծունեությանը, նշենք, որ նա շարունակում է իր ստեղծա-գործական, կատարողական, մանկավարժական և կազմա-կերպչական աշխատանքները, և դրանով առ այսօր պա-հպանում ու զարգացնում է Հայաստան-Ռուսաստան մշա-կության կապերը: Այն հարցին, թե ինչպե՞ս նա մեկնեց Ռուսաստան, կոմպոզիտորը պատասխանեց. «2014 թ. սեպտեմբերից այլևս չաշխատեցի Երևանի պետական կոն-սերվատորիայում: Նույն ամսին հրավեր ստանալով մեկնե-ցի Ռուսաստանի հյուսիս՝ Տյումենի մարզ, Սուրգուտի շր-ջան, Սիտոմինո գյուղ, որտեղ աշխատեցի 3 ամիս: 2014-ի հոկտեմբերին արժանացա մրցանակների Կալուզայում տեղի ունեցած «Композитор XXI век» միջազգային մրցույ-թում և «Хоровая лаборатория XXI век» կոմպոզիտորների Համառուսաստանյան 7-րդ մրցույթում: Գնացի Մոսկվա ա-նուհետև Պետերբուրգ և մասնակցելով այդ մրցույթների համերգ-մրցանակաբաշխություններին և ստացա մրցա-նակները: Դրանցի հետո նորից վերադարձա Հայաստան: 2015 թ. նորից մեկնեցի Սանկտ-Պետերբուրգ, որտեղ մար-տից մինչև սեպտեմբեր աշխատեցի Պրոֆմիության հունա-նիտար ինստիտուտի խորեոգրաֆիայի ֆակուլտետում, որպես կոնցերտմայստեր: Տարբեր առիթներով նորից գա-լիս եմ Հայաստան, նորից հետ վերադառնում: Նշեմ նաև, որ 2016 և 2017 թվականներին մասնակցել եմ «Хоровая лаборатория XXI век» (Սանկտ-Պետերբուրգ), «Maurise Ravel» (Իտալիա) մրցույթներին և արժանացել մրցանակ-



«Земля детей» 30-րդ միջազգային փառատոնի բացման համերգին Հայաստանը ներկայացնող կոմպոզիտոր էր Սոֆյա Միքայելյանը, հնչեց նաև նրա «Կուժերով պար»ը, մանկական նվագախմբերի մասնակցությամբ, դիրիժոր և նախագծի ղեկավար Իլյա Կուզնեցով

ների: Ներկայում աշխատանք չունեմ, զբաղվում եմ իմ մա-խագծով՝ սկսած 2014 թվականից: Այն կոչվում է «Ռուս-հայ-կական կամուրջ», որի շրջանակներում կատարվում են Հայաստանի և Պետերբուրգի կոմպոզիտորների ստեղծա-գործությունները: Կազմակերպել եմ մի քանի համերգներ՝ նվիրված Կոմիտասին: 2018 թ. փետրվարին. Յակուտիայից հրավիրել եմ օպերային երգչուհի Աննա Դիչկովսկայային, Պետերբուրգից՝ Եվգենյա Չուրկովային, որոնց հետ հայե-րենով հնչեցրել եմ Կոմիտասի ստեղծագործություննե-րից: Նաև ստեղծել եմ «MEGEDAS» անսամբլը՝ ֆլեյտա, ջութակ և 3 դուդուկ, որոնց համար մշակել և ղեկավարել եմ Կոմիտասի գործերից: 2017-ից կարդում եմ դասախոսու-թյուններ, երգում եմ և ներկայացնում հայկական ֆուլկլո-րը»:

Այս ամենի մասին Ս. Միքայելյանը ներկայացրել է Հա-յաստանի կոմպոզիտորների միության հերթական նիստե-րից մեկում, որին ներկա է եղել նաև ՀՀ մշակույթի նախկին նախարար Արմեն Ամիրյանը, ով բարձր է գնահատել նրա գործունեությունը և ասել, որ ավելի ակտիվ լինի:

Ս. Միքայելյանը 2018-ից Սանկտ-Պետերբուրգի կոմպո-զիտորների միության անդամ է, 2019-ից՝ Սանկտ-Պետեր-բուրգի երաժշտական ֆոնդի անդամ, 2019 թվականից՝ Սանկտ-Պետերբուրգի Համերգային գործիչների միության անդամ:

ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆ
Երաժշտագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺԻՕՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԳԵՑ ԹԵԱՏՐԱԼՆՈՒՄ

«Տավիղ» երգչախմբի համերգը՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին

1 Համերգը, որն իրականացավ փետրվարի 20-ին, երկու բաժնից էր. 1-ին բաժնում հնչեցին ժողովրդական երգերի մշակումներ՝ արված Քրիստափոր Կարա-Մուրզայի, Թաթև Ալեքսանյանի, Կարո Զաքարյանի և Ստեփան Շաքարյանի կողմից: Ինչպես նաև հնչեցին երվանդ Սահառունու և Աշոտ Պատմագրյանի ստեղծագործություններից՝ նվիրված Սայաթ-Նովային: Համերգի 2-րդ բաժնում հանդիսատեսն ունկնդրեց Կոմիտասի մշակումները, ինչպես նաև Ռոմանոս Մելիքյանի, Արմեն Տիգրանյանի և Ալեքսանդր Զարուբյանյանի երկերից, որոնք գրված են Հ. Թումանյանի տեքստերի հիման վրա: Համերգին կատարումներով հանդես եկան նաև մեներգիզներ՝ Մեղեդի Եղնազարյանը, Արմեն Զարգարյանը, Արսիմե Հովհաննիսյանը, Նանոր Նազարյանը և Էդիկ Վարդանյանը: Հանդիսատեսը ոչ միայն ունկնդրում էր երգչախմբային կատարումները, այլ մերթնդմեք հաղորդակից լինում երկու հայ մեծերի կենսագրական տվյալներին և յուրաքանչյուր երգի մասին բացատրությանը: Ավելի քան մեկ ժամ տևած ելույթն արժանացավ ունկնդրի բուռն գնահատանքին:

Նշենք, որ «Տավիղ» երգչախումբն իր ստեղծման օրվանից աշխատել է զարգացնել «մաքուր երաժշտություն» հասկացությունը և սովորեցնել սուֆեջո: Ունեցել է ծայրավարժության դասընթացներ: «Տավիղ» երգչախումբը միշտ ունեցել է իր տարեկան ելույթները, մասնակցել է ազգային-կրոնական միջոցառումներին և համայնքային ծեռնարկներին ու միշտ արժանացել է բարձր գնահատականի:

Վերջին տարվա ընթացքում երգչախումբն անդամների տպավորիչ աճ է արժանագրել և համալրվել է հիմնականում երիտասարդներով:

Երգչախմբի խմբավար Արփի Սիմրոջյանը (Նազարյանը), ծնունդով Թեհրանից, ԵՊԿ վոկալ-տեսական ֆակուլտետի խմբավարական բաժնի 2007-2014 թթ. շրջանավարտներից է: Սովորել է պրոֆեսոր Մարիկա Եղիզարյանի,

այնուհետև Տիգրան Հեքեքյանի, իսկ հետո պրոֆեսոր Հովհաննես Սիրոջյանի մասնագիտական դասարաններում: Նա հիմնել է երգչախմբեր («Բնար», «Տավիղ», «Նոր ծայներ») և ղեկավարել շուրջ 10 երգչախումբ:

Ինչպես նշեց Ա. Սիմրոջյանը. «Քանի տարի էր, որ նպատակադրվել էի «Տավիղ» երգչախմբի ելույթը նվիրել հայկական ժողովրդական երգերին, բայց մեր կամքից անկախ տարբեր պատճառներով հետաձգվում էր: Երբ մուտք գործեցինք 2019 թ., որը համընկնում էր Մեծն Կոմիտաս վարդապետի և «Ամենայն հայոց» բանաստեղծ՝ Հովհաննես Թումանյանի 150-ամյակներին, ազգային պարտքս համարեցի իմ երգչախմբերով մասնակից լինել այս արժեքավոր միջոցառմանը: «Տավիղ» երգչախմբի հետ կապված որոշեցի ելույթի 1-ին բաժինը հատկացնել Ք. Կարա-Մուրզայի, Թ. Ալեքսանյանի, Կ. Զաքարյանի, Ս. Շաքարյանի և աշուղական արվեստին պատկանող Սայաթ Նովային նվիրված երկու ստեղծագործություններին, իսկ 2-րդ բաժինը ամբողջությամբ Կոմիտաս վարդապետի և Հովհաննես Թումանյանի գրչին պատկանող ստեղծագործություններին: Ելույթը ծրագրված էր 2019 թվականի նոյեմբերի 21-ի համար, սակայն որոշ անսպասելի պատճառներով հետաձգվեց 2020 թ. փետրվարի 20-ին: Այժմ երգչախմբին անդամակցում են թե՛ ավագ և թե՛ երիտասարդ սերնդից անհատներ: Խումբը նման է մի ընտանիքի, ուր երիտասարդներն ավագներից ստանում են մշակութային սնունդ, և որտեղ սովորում են, թե ինչպես պիտի արվեստի նկատմամբ խոնարհ լինել ու պահպանել մշակութային արժեքները: Ներկայումս խմբավարում են երեք երգչախմբեր՝ «Տավիղ», որը պատկանում է Հայ Համալսարանականների Ընդհանուր Միությանը (Հ.Հ.Ը.Մ.), որի աշխատանքը սկսել են հենց հիմնադրման օրից՝ 1988-ից, «Նոր ծայներ», որը պատկանում է Թեհրանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդին (ԹՀԹԿ. Խ.), որտեղ ևս աշխատանքը սկսել են իր հիմնադրման օրից՝ 2011-ից, այս երգչախմբ-


բին մասնակցում են հայ երգչախմբային արվեստը սիրող բոլոր դպրոցների հայ աշակերտները, և «Արարատ» երգչախումբ, որը պատկանում է Հայ Մշակութային Արարատ Կազմակերպության (Հ.Մ.Ա.Կ.) Արվեստի միությանը, որի աշխատանքը ինձ է հանձնարարվել 2016-ից: Հարկ է նշել, որ «Տավիղ» երգչախմբից բացի թե՛ «Արարատ» և թե՛ «Նոր ծայներ» երգչախմբերը մասամբ տարբեր երգացանկերով մասնակցել են Կոմիտաս վարդապետի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների: Երեք երգչախմբերն էլ միշտ իրենց մասնակցությունն են ունեցել ազգային, կրոնական և պետական տարբեր միջոցառումներին: Ներկայումս նկատի առնելով կյանքի դժվարին պայմանները, աշխատանքը վերին աստիճանի ծանր է և դժվար, սակայն համուն մեր հարուստ մշակույթի և ազգային-հայրենասիրական վեհ նպատակին ծառայելու համար աշխատում ենք պայքարել և կանգուն պահել մեր լեզուն ու մշակույթը»:

Արփի Սիմրոջյանն ազգանվեր գործունեություն է ծավալում Սփյուռքում՝ հայ երգ-երաժշտությունը տարածելով ոչ միայն հայ, այլ նաև այլազգի համայնքներում, ինչպես նաև կրթում և իր գիտելիքներն է փոխանցում ապագա սերնդին:

ԱՐՄԻՆԵ ԱԹՅԱՆ

Երաժշտագետ,

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր



«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

❖ Փետրվարի 2-8-ը, Եգիպտոսի Շարմ էլ Շեյխ քաղաքում տեղի ունեցավ Կատարիական Արվեստի Համաշխարհային Անցիալիզմի (WAPA) «Red Sea Star -2020» Արվեստների միջազգային մրցույթ-փառատոնը, որին մասնակցում էին կատարողներ Իտալիայից, Լատվիայից, Լիտվայից, Ռուսաստանից, Հայաստանից և այլ երկրներից: Կ. Սարաջյանի անվ. ՄԵՂ Դուդուկի բաժնի 4-րդ դասարանի աշակերտ Լևոն Խոջայանն այդ մրցույթում արժանացել է Grand Prix մրցանակի (ուսուցիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Գրիգորյանի դասարան): Նույն դպրոցից մրցանակի է արժանացել նաև Եդիշ Գևորգյանը: Մրցույթին մասնակցել և Grand Prix մրցանակի են արժանացել նաև Արմյանի Էստրադային և Զազային Արվեստի ստուդիայի սաները՝ Լիլիթ



Լևոն Խոջայան
Կ. Սարաջյանի անվ. ՄԵՂ Դուդուկի բաժնի 4-րդ դասարանի աշակերտ



Արմյանի տտորային և Զազային արվեստի ստուդիայի սաները, Ստուդիայի տնօրեն Սամվել Բադալյան

Լազարյանը, Ալեքս Գյուրջյանը, Դավիթ Մնացականյանը, Տիգրան Սարգսյանը, Անրի Կարապետյանը, Վոլոդյա Նիկողոսյանը, Գրիգոր Եղիզարյանը, Նարեկ Մուսաբեկյանը: Մրցույթի միջազգային հանձնախմբի ներկայացուցիչներն էին՝ Մարկո Նիետո Անտոնիո Ջերմանոն (Մեքսիկա), Տատյանա Ապանասենկոն (Ուկրաինա), Անահիտ Խեչումյանը (Հայաստան), Նելլի Պոգրեբնյան (Ուկրաինա), Էրմանո Կրոչեն (Իտալիա), Դարինա Կուդակև (Լատվիա), Դոմենիկո Պրիմոտիչին (Իտալիա), Պրիսկա Սելվինին (Շվեյցարիա), Մարինա Օ՛Նիլ Սինեսերը (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

❖ Փետրվարի 14-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը, Երևանի պետական կամերային երգչախմբի մենակատարների մասնակցությամբ տեղի ունեցավ համերգ՝ նվիրված աշխարհահռչակ օպերային երգչուհի Լիլի Զուգասյանի ծննդյան 100-ամյակին: Հայ, ռուս և արևմտամիլոպական կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումներով հանդես եկան Թամարա Մոսինյանը (սոպրանո), Ալլին Հերոսյանը (սոպրանո), Ջեննի Նա-

զարյանը (սոպրանո), Մաքրուհի Խաչատրյանը (սոպրանո), Նելլի Գասպարյանը (սոպրանո), Նելլի Վարդանյանը (սոպրանո), Անդրանիկ Մալխասյանը (բարիտոն), Սարգիս Մինասյանը (տենոր), Մերգելուս Ամիրխանյանը (տենոր), Տիգրան Հակոբյանը (տենոր), Ռուզաննա Գրիգորյանը (դաշնամուր) և Տիգրան Մեսրոպյանը (դաշնամուր):

❖ (սկզբը տես էջ 2) ԵՊԿ Օպերային ստուդիայի արտիստների մասնակցությամբ, փետրվարի 12-ին տեղի ունեցավ համերգ, որի ընթացքում հնչեցին հայկական 10 օպերաներից քաղված արիաներ և զուգերգեր: Կատարումներով հանդես եկան՝ Հայկ Վարդանյանը, (տենոր, կատարեց՝ Խաչատուր Արմյանի արիան Գևորգ Արմենյանի «Խաչատուր Արմյան» օպերայից), Սիրանուշ Օվսիյանը (մեծուսույան, կատ.՝ Աննայի արիան Ալեքսանդր Զարուբյանյանի «Սայաթ-Նովա» օպերայից և Փառանձեմի արիան Տիգրան Զուխասյանի «Արշակ Բ» օպերայից), Անի Ղազարյանը (սոպրանո, կատ.՝ Անուշի արիան Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից), Կարինե Սիմոնյանը (սոպրանո, կատ.՝ Անուշի երգը Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից), Անահիտ Մերոյանը (սոպրանո, կատ.՝ Սուսանի արիան Լևոն Խոջա-Էյնաթյանի «Նամուս» օպերայից), Մարիան Մկրտչյանը (սոպրանո, կատ.՝ Օլիմպիայի արիան Տիգրան Զուխասյանի «Արշակ Բ» օպերայից), Գևորգ Գինոսյանը (բարիտոն, կատ.՝ Մոսիի արիան Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից): Գևորգ Գինոսյանը և Մելինե Նազարյանը կատարեցին Անուշի և Մոսիի զուգերգը Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից, Հեղինե Խաչատրյանն ու Արման Առաքելյանը կատարեցին Մարոյի և Ռուբենի զուգերգը Անդրեյ Բաբակի «Արծվաբերդ» օպերայից: Գայանե Սահակյանի (սոպրանո) կատարմամբ հնչեց Արևիկի արիան Հարո Ստեփանյանի «Լուսաբացին» օպերայից, Մելինե Նազարյանը (սոպրանո) կատարեց Մարոյի արիան Անդրեյ Բաբակի «Արծվաբերդ» օպերայից, Մեգի Սարգսյանը (սոպրանո)՝ Վարդիթի արիան Վարդան Տիգրանյանի «Սոս և Վարդիթ» օպերայից, Հեղինե Խաչատրյանը (սոպրանո)՝ Շուշանի արիան Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից, Արման Առաքելյանը (բարիտոն)՝ Աշուղի արիան Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից, Լուսինե Ստեփանյանը (սոպրանո)՝ Կարինեի արիան Տիգրան Զուխասյանի «Կարինե» օպերետից:



❖ 2019 թ. նոյեմբեր 17-ին, ուսանողների միջազգային օրը, Չեխիայում նշվում է կարևորագույն պետական տոն. Ոգեկոչվեց և՛ Թավշյա հեղափոխության 30-ամյակը, և Համաշխարհային պատերազմի սկզբնավորման 80-ամյակը: Որպես երաժշտական գծով ղեկավար և կազմակերպիչ հրավիրված էր դիրիժոր Հայկ Ուրիժեանը: Նրա խոսքով. «Վերջին տարիներին պատիվը ունեցած են ես հրավիրուելու՝ Նոյեմբերի 17-ի ոգեկոչմանը երաժշտական ղեկավար եւ կազմակերպիչ ըլլալու, սկսելով հինգ միացեալ երգչախմբից բացօթեայ ելույթն ուր պետական աւագանիի անդամներ ծաղկեպսակներ կը գետեղեն՝ իոն ուր 17 Նոյեմբերին Նա-ցիստները բողոքող Չեխ ուսանողներին գնդակահարեցին, ապա Opletal-ի եւ Sedlncek-ի յուշարձանին, եւ ապա Albertov, ուր բազմահազար ժողովուրդ կը հաւաքուի»: Այնուհետև, նույն օրը, Երեկոյան նրա ղեկավարությամբ, Կարոյան համալսարանի երգչախմբի և նվագախմբի կատարմամբ, հնչեցին Ա. Դվորժակի, Բ. Սմետանայի և Վ. Տաուսկիի ստեղծագործությունները:



Հայկ Ուրիժեան


Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՅԱՆԸ



«Բեթլեհեմյան Մատուռ» համերգային դալիժում, Պրահա, 2019 թ.

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ Ն Ե Ր


Հրաքարակվել է երեք ժողովածու՝
Նվիրված
Կոմիտասի ծննդյան 150-ամյակին



Զե՞ որ նա ինքը՝
Մի մարդ էր թեպետ.
Հազարի նման մի հայ
վարդապետ.

Մի մարդ էր,
Սակայն կարծես մի
մարդ էր բազմահատորյա,

Մի մարդ էր,
Սակայն ինքն էր մի
ամբողջ կոնսերվատորիա՝
երգիչ, նվագող,
հաղեր հավաքող...



Պարույր Սևակ
«Անունելի զանգակատուն»

Կոմիտասի ծննդյան 150-ամյակը նշվեց Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ: ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով, Հայաստանի երաժշտական ընկերության (նախագահ՝ պրոֆեսոր Դավիթ Ղազարյան) նախաձեռնությամբ, Տիգրան Մեծ հրատարակչության տպարանում, 2019 թ. հրատարակվեցին երեք ժողովածու՝ նվիրված Վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանին:

«Կոմիտաս. խմբերգեր» ժողովածուն կազմել և խմբագրել է Դավիթ Ղազարյանը:

Ընդգրկված է Կոմիտասի 50 խմբերգ, որոնք համեմված են ՀՀ ժողովրդական նկարիչ Արտո Չաքմաքչյանի Կոմիտասի գեղեցիկ գծանկարներով: Խմբերգերի, ինչպես նաև մյուս երկու ժողովածուներում ընդգրկված ստեղծագործությունների տեքստերը ներկայացված են նաև



Արտո Չաքմաքչյանի
գծանկարներից

հայերենի անգլերեն տառադարձությամբ, որը հնարավորություն կտա Կոմիտասի ստեղծագործությունները կատարեն նաև օտարազգի երաժիշտները: Դ. Ղազարյանի խոսքով. «2019 թվականին ժամանակակից հայ դասական երաժշտության հիմնադիր՝ Կոմիտասի 150-ամյա հոբելյանն է: Այն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների օրացույցում: Հայ մեծանուն երգահան, ազգագրագետ, խմբավար, երգիչ, մանկավարժ Կոմիտասի խմբերգերը նրա մեզ թողած երաժշտական ժառանգության մի զգալի մասն են կազմում: Խմբերգերը շատ անհրաժեշտ և օգտակար կարող են լինել պրոֆեսիոնալ, սիրողական երգչախմբերին, նրանց ղեկավարներին՝ պրակտիկ աշխատանքում, համերգային գործունեության ժամանակ, ուսումնական գործընթացում, համալրելով երգչախմբի երկացանկը, ինչպես նաև հանրահռչակելու Կոմիտասի՝ մեզ թողած երաժշտական ժառանգությունը»:

Հրատարակչական աշխատանքները կատարվել են «Կոմիտաս» հրատարակչությունում (հրատարակիչ Ռուզաննա Եսայան):

Մյուս ժողովածուն է՝ «Կոմիտաս. Մանկական խմբերգեր», որը կազմել և խմբագրել է Արտաշես Բաբուրյանը: Ընդգրկված են 27 մանկական խմբերգեր, ինչպես նաև Կոմիտասի մի քանի բանաստեղծություններ՝ «Պատրանք», «Աստված իմ», «Աղերս, Կույրը», «Աղոթք»:

Ինչպես Դ. Ղազարյանն է նշել ժողովածուի նախաբանում. «Բազմաշերտ է մեր ժողովրդի երաժշտական մշակույթը իր զարգացման տարբեր փուլերում: Հայ երգչախմբային արվեստը, որ սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ շրջանում, սերտորեն կապված է մեր ժողովրդի ընդհանուր և առանձնապես երաժշտական մշակույթի հետ և բխում է նրանից: Ոչ մի գիրք, ոչ մի կտավ չեն կարող արտահայտել մեր ազգային նկարագիրն այնքան հարազատորեն և այնպես ճիշտ, ինչպես անում են այն զարմանալի երգերը, որ մի բառով կոչվում է կոմիտասյան»:

Հայ երաժշտական արվեստի պատմության մեջ Կոմիտասը երևույթ էր: Եվ իր երգերի մեջ գծագրվում է մեր անցած ճանապարհը՝ գողթան մեղեդիներից մինչև քրիստոնեություն, V դարի Սահակ-Մեսրոպյան նորաստեղծ շարականներից, մինչև Նարեկյան մեր անգուգական հոգևոր գանձերն ու տաղերը: Հազարամյակներ ապրող մեր ժողովրդի մեղեդիացած պատմությունը, նրա անցած ճանապարհի կենսափոխակերպությունը, անսպառ հարստությունն ու հմայքը, ուժն ու էությունն ունեն կոմիտասյան երգերը: Կոմպոզիտոր և ազգագրագետ, գիտնական և երգիչ, խմբավար և մանկավարժ՝ նա իր բազմակողմանի գործունեությամբ հսկայական դերակատարություն է ունեցել մեր ժողովրդի մշակույթի գրեթե բոլոր ոլորտների զարգացման գործում: Հայ մեծ երաժշտագետը լինելով նաև մեծ մանկավարժ, մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում դարոցականների գեղարվեստական դաստիարակության հարցերը: Կոմիտասի գրավոր ժառանգության ուսումնասիրություններից երևում է, որ այդ գործում ամենակարևոր դերը նա հատկացրել է ժողովրդական երաժշտությանը և իր ծայնագրած ու մշակած հայ ժողովրդական երգերի մի մասը պարզ մերդաշնակել է հատկապես մանկական երգչախմբերի համար: Իր այդ դաշնակումները Կոմիտասը բազմիցս կատարել է էջմիածնի Գեորգյան ծննդարանի երգչախմբում, դասարանական երգեցողության ժամանակ, ինչպես նաև՝ Կ. Պոլսի դպրոցներում:

Կոմիտաս-բանաստեղծը մեզ նվիրական ու ծանոթ նույն անունն է, մարդ՝ ով տվյալ դեպքում ոչ թե երգում է, այլ խոսում է մեզ հետ: Խոսում է ծառերի ու ծաղիկների հետ, իր խոհերի մասին՝ բնության, կյանքի գեղեցկությունների, մարդկային կարոտի, երազանքների, ջերմության և վերջապես խոսում է Տիրոջ հետ, և այն ամենի մասին, որ կարող է խոսել մարդը, երբ մնում է ինքն իր հետ»:

Ժողովածուի հրատարակչական աշխատանքները կատարվել են «Ամրոց գրուպ» ՍՊԸ-ում: Ձայնանիշերի շարվածքը՝ Ա. Բաբուրյանի, շապիկը՝ Ա. Ուռուտյանի:

3-րդ ժողովածուն՝ «Կոմիտաս. Մեներգերի ընտրանի»-ն, ընդգրկում է մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ և հոգևոր տաղեր: Կազմել և խմբագրել է Զարուհի Ղազարյանը: Այն շատ օգտակար և անհրաժեշտ կարող է լինել պրոֆեսիոնալ երգիչ-երգչուհիներին, մեներգեցողության բաժնի ուսանողներին, նաև դաշնակահար կոմպերտմայստերներին:

Ժողովածուի հրատարակչական աշխատանքները կատարվել են «Ամրոց գրուպ» ՍՊԸ-ում: Ձայնանիշերի շարվածքը՝ Ռ. Սարգսյանի և Ն. Աթանասյանի, շապիկը՝ Ա. Ուռուտյանի:

Ժողովածուների այս տպագրությամբ ևս մեկ անգամ լույս սփռվեց Մեծն Կոմիտասի ազգանվեր գործունեության՝ մեներգերի, խմբերգերի և մանկական խմբերգերի ասպարեզներում:

Կոմիտասի գործունեությանը վերաբերող
արեւմտահայ մամուլի անդրադարձները
մեկ գրիւմ

Փետրվարի 15-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ «Թերթապատում. մամուլի անդրադարձները Կոմիտաս Վարդապետի մասին. Պոլսոյ շրջան. 1910-1911 թթ., Գիրք Ա» գրքի շնորհանդեսը:

Աշխատությունը աղբյուրագիտական հետազոտություն է, որտեղ մեկտեղված են Կոմիտասի՝ Կ.Պոլսում և հարակից գավառներում, ինչպես նաև Եգիպտոսում ծավալած գործունեության առաջին շրջանի մասին արևմտահայ օրաթերթերի և պարբերաթերթերի արձագանքները (Պոլսից՝ «Բիւուզանդիոն», «Ազատամարտ», «Ժամանակ», «Տաճար»,

«Արևելք», «Մանգումնի Էֆքետար», «Հայրենիք», Իզմիրից՝ «Դաշինք», Կահիրեից՝ «Լուսաբեր-Արև»): Գիրքը կազմել է ֆրանսահայ երաժշտագետ Արմինե Գրիգորյանը, խմբագրել՝ Գուրգեն Գասպարյանը:

Գրքում Կոմիտասի մասին ժամանակակիցների գրած նյութերն ընդգրկված են ամբողջական և ժամանակագրական դասավորությամբ: Այն ունի առաջաբան՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն, որտեղ տրված են նյութերի հակիրճ նկարագրությունն ու արժևորումը: Ամփոփ աղյուսակներով, ցանկերով և քարտեզներով համառոտ ներկայացվում է Կոմիտաս վարդապետի գործունեության կարևորագույն ուղենիշերը: Մամուլի նյութերը թերթի խմբագրականներ են, առանձին հոդվածներ, տեղեկատվություններ, համերգի և դասախոսության ծանուցումներ, հայտագրեր, եկեղեցական ծեսի ազդեր, բանախոսության և քարոզների տղագրություններ, հրավերներ, բանավեճեր համակիրների և հակառակորդների միջև, Կրոնական ժողովի որոշումներ և այլն:

«Մամուլի տվյալները կարելի է երկու մասի բաժանել՝ լրատվական և հեղինակային հոդվածներ: Լրատվականը բնականաբար այն մասին է, թե երբ Կոմիտասը ժամանեց, այս կամ այն երկիր, երբ մեկնեց, դասախոսությունների մասին ծանուցումներն են, գեկույցները: Եթե խոսենք հեղինակային հոդվածների մասին, ապա անհրաժեշտ է նշել, որ արձակագիր Տիգրան Կամսարականը գրել է մի հոդված, որը հրատարակվել է չորս անգամ: Մի խոսքով՝ հոյակապ գրություններ կան», - ներկայացրեց Ա. Գրիգորյանը:

Նա պատմեց, որ Կոմիտասի՝ Պոլսում կայանալիք առաջին համերգի ժամանակ պատրիարքարանից հրահանգ է եկել, որ առաջին բաժինը, որում պետք է եկեղեցական երաժշտություն հնչեր, չպետք է կատարվի, որովհետև չասված և չտեսնված երևույթ էր եկեղեցական երգերն ու շարականները աշխարհիկ բեմում ներկայացնելը: «Բազմաթիվ վեճեր են սկսվել, դեմ ու կողմ կարծիքներ են հնչել, տարբեր մեկնաբանություններ են եղել թեմայի շուրջ: Այդ ամենը մամուլում ներկայացված է: Կյանքը կենդանանում է, երբ ուսումնասիրվում են մամուլի հրատարակությունները: Շատ բան է բացահայտվում, և ժամանակաշրջանը շոշափելի է դառնում», - նշեց Ա. Գրիգորյանը:

Անդրադառնալով աղբյուրներին՝ նա շեշտեց, որ թուրքական արխիվներում գրեթե ինֆորմացիա չկա, անգամ որևէ մամուլի արձագանք, թարգմանություն չկա: «Երբ Կոմիտասը գնում է Եգիպտոս, տեղի մամուլի արձագանքները՝ արաբերեն թերթերի գրությունները, մեծամասամբ թարգմանվել են, իսկ Պոլսի և Իզմիրի թուրքական մամուլից՝ ոչ մի թարգմանություն: Այդ առումով շատ աշխատանք կա անելու, քանի որ մենք պետք է իմանանք, թե նրանք ինչ էին մտածում, ինչ էին զգում: Իհարկե, Կոմիտասը երկրպագուներ ունեցել է, օրինակ՝ իշխան Մեջիդը, որը նկարիչ էր, արվեստագետ, սքանչալից էր Կոմիտասով և բազմիցս նրան հրավիրել է իր պալատ, բայց դա բավարար չէ, պետք է մամուլի կարծիքն իմանալ», - ընդգծեց Արմինե Գրիգորյանը:

Նա խոստովանեց, որ գիրքը կազմվել բավականին բարդ էր, քանի որ երկար ժամանակ է պահանջվել ծանոթագրությունների համար:

Նշենք նաև, որ գրքում ընդգրկված են ծանոթագրություններ, կենսագրական ցանկ, օգտագործված գրականության և մամուլի ցանկ, բառարան, անվանացանկ և տեղանունների ցանկ:

Գիրքը լույս է տեսել «Վերածնունդ» մշակութային և ինտելեկտուալ հիմնադրամի աջակցությամբ, «Անտարես» հրատարակչությունում, 2019 թ.: Ներածության և առաջաբանի անգլերեն թարգմանությունը կատարել է Նազարեթ Սեֆերյանը, ֆրանսերեն թարգմանությունը՝ Նուրե Աբրահամյանը և Հարություն խաչատուրյանը: Շապիկի, քարտեզների և ժամանակագրական աղյուսակների ձևավորումը՝ Գուրգեն Անտոնյանի, համակարգչային մակետը, էջադրումը և ներդիրների ձևավորումը՝ Գուրգեն Գասպարյանի:

ԱԹՈՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Երաժշտագետ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԾԻ ՎԱՅՆՎԵՐԿՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ԳԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԿՅԱՆ, ԳՈՂԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՂԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ՍՈՖԱ ԱՅՆԱՒՈՐՅԱՆ (ԽՈԱ.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՂԱՐ ՂՈՂԱՆՍԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համափոխ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.02.2020:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՁԼՍ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել
խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508214/

